# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 04 (1354) ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՈՒԱՐ 16, 2008
VOLUME 28, NO. 04 (1354) SATURDAY, FEBRUARY 16, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ԱԶԳԸՆՏԻՐԸ ԱԶԳՈՎԻՆ ՎԵՐԸՆՏՐԵՆՔ, ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Փետրուարի ութին իր աւարտին յանգեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութիւններուն գրանցուած թեկնածուներու ինքնաբացատրման պայմանաժամը եւ, արդէն իսկ, յառաջիկայ շաբաթ Փետրուարի 19-ին տեղի կ'ունենան նախագահական ընտրութիւնները:

Այսօր ամիսներէ ի վեր մեր երկրի մէջ տեղի ունեցան եւ տակաւին գործընթացի մէջ կը գտնուին նախագահական նախընտրական հաւաքներ: Նախագահական թեկնածու, նորանկախ Հայաստանի առաջին ազգընտիր Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան, մեկնելով իր անբասիր հայրենասիրութենէն ու ազգասիրութենէն, առանց վերապահութիւններու, դիւանագիտական հաշուարկներու, տարատեսակ ճնշումներէ խուսափելու՝ անկեղծ, բացիրաց, ու շեշտակի՝ կատարեց բացայայտումներ, իր քարոզարշաւներով:

Ան նկարագրեց մեր նորանկախ հայրենիքէն ներս վերջին տասը տարիներուն, Ռոպերթ Քոչարեան-Սերժ Սարգսեան իշխանութեան շրջանին տիրող «կեղծիքի, թշուառութեան, անպարկեշտութեան, ամենաթողութեան, հաւաքական սպանդներու եւ օրը օրին անհանգստացնող չափերու հասնող արտագաղթի պայմանները», ինչպէս ամփոփ կերպով, անգամ մը համար եւս պիտի կրկնուէր Կիւմրիի 10 Փետրուար 2008-ին տեղի ունեցած նախագահական նախընտրական հանրահաւաքին: Այդ հանրահաւաքին ներկայ գտնուած են աւելի քան 150.000 բազմութիւն, որ հայրենի մամուլի գնահատութեամբ «նախընթացը չէ ունեցած ոչ մի հանրահաւաք»:

Անկախ Հայաստանի առաջին ազգընտիր Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձը քաղաքական ասպարէզէն ներս, նոր յոյսեր ներշնչեց մեր հայրենաբնակ թշուառացած ազգաբնակչութեան ու հայրենի ցաւալի առօրեայով տագնապող սփիւռքահայ զանգուածներու սիրտերուն:

Լեւոն Տէր-Պետրոսեան, շնորհիւ իր անբասիր, հաղորդական ու ջերմ նկարագրին՝ շուտով յուսադրեց, համոզեց, խանդավառեց եւ վերականգնեց իր ժողովուրդը, զօրացուց անոր հաւատքը հանդէպ կարելի լուսաւոր ապագային:

Հաւատացին անոր նուիրումին ու խոստումներուն:

Լեւոն Տէր-Պետրոսեան կուգար անխտրական ոգիով, ուղղամիտ ու

Շար.ը էջ 19

## ՔՈՉԱՐԵԱՆ-ՍԱՐԳՍԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԾ Է ԽԱՐԽԼԻԼ
### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ ՄԻԱՑԱՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ
# 150 ՀԱԶԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻՆ

Փետրուար 19-ին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրութիւններուն հաշուուած օրեր մնացած, մինչ վարչապետ Սերժ Սարգսեանի ընտրական հանդիպումներուն ներկայութիւն ապահովելու համար գործարաններու աշխատաւորները եւ դպրոցներու ուսանողները ստիպողաբար հրապարակներ կ'առաջնորդուին, անդին հարիւր հազարաւոր ժողովուրդ ինքնակամ ներկայ կը գտնուի Լեւոն Տէր-Պետրոսեանի հանրահաւաքներուն:

Երկրէն ներս վախի մթնոլորտի աստիճանաբար վերացման հետ զուգահեռ, Քոչարեան-Սարգսեան իշխանութեան հիմքերը սկսած են խարխլիլ, որուն ապացոյցը Հանրապետական Կուսակցութեան անդամ պատգամաւորներու միացումն է Տէր-Պետրոսեանի ճակատին:

Շաբաթ, Փետրուար 9-ին Երեւանի մէջ կայացաւ ընդդիմութեան հերթական հանրահաւաքն ու անոր յաջորդող երթը, որուն ներկայ գտնուեցաւ 150 հազարէ աւելի ժողովուրդ, որոնք միաբերան կը բացականչէին «Լեւո՛ն նախագահ»-«Լեւո՛ն նախագահ»:

Հանրահաւաքի ընթացքին հրապարակուեցաւ Հանրապետական Կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ, Ազգային Ժողովի պատգամաւոր Սամուէլ Միքայէլեանի գլխաւորած «Ոգու փորձութիւն» հասարակական կազմակերպութեան յայտարարութիւնը նախագահական ընտրութիւններուն Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը պաշտպանելու մասին: Կազմակերպութեան խորհուրդի ընդունած յայտարարութեան մէջ ըսուած էր . - «Հաշուի առնելով մեր երկրում ստեղծուած բարոյահոգեբանական մթնոլորտի փոփոխման անհրաժեշտութիւնը, հաւատարիմ մնալով Սպարապետ Վազգէն Սարգսեանի գաղափարներին, միանում ենք օրէցօր թափ առնող համաժողովրդական շարժմանը»:

Հանրահաւաքին կը մասնակցէին նաեւ ՀՀԿ-ի խորհրդարանական խմբակցութեան պատգամաւորներ Միասնիկ Մալխասեանը եւ



Տեսարան մը Երեւանի մէջ ցարդ տեղի ունեցած մեծագոյն նախընտրական հանրահաւաքէն

Շար.ը էջ 4

## ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԱՅՑԸ ՄՈՍԿՈՒԱ

Հայաստանի առաջին նախագահական թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեան Երկուշաբթի, Փետրուար 11-ին մէկօրեայ այցով գտնուած է Մոսկուա, ուր հանդիպում ունեցած է Ռուսաստանի առաջին փոխ-վարչապետ եւ յաջորդ հաւանական Նախագահ Տմիդրի Մեդվեդեւի հետ:

Ռուսաստանեան աղբիւրներու համաձայն, Տէր-Պետրոսեան Մոսկուայի մէջ իր ունեցած քաղաքական խորհրդակցութիւններու ժամանակ ներկայացուցած է իր դիրքորոշումը առանցքային հարցերու շուրջ:

Մոսկուայի «Հայկական Ազգային Միաբանութիւն» ակումբի ղեկավար Սմբատ Ղարախանեան Լեւոն Տէր-Պետրոսեանի այցը գնահատած է որպէս «շատ արդիւնաւէտ եւ կարեւոր»:

«Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցի հարցին ի պատասխան՝ Տմիդրի Մեդվեդեւի օգնական Վլատիմիր Անդրիանով ոչ հաստատած եւ ոչ ալ հերքած է Տէր-Պետրոսեանի հետ Ռուսաստանի առաջին փոխվարչապետի հանդիպման մասին տեղեկութիւնը:

## ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՒՍ ՄԻԱՑԱՒ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

Երեքշաբթի, Փետրուար 12-ին Րաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութիւնը յայտարարեց իր որոշումը՝ նախագահական ընտրութիւններուն Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարելու կապակցութեամբ:




Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Րաֆֆի Յովհաննիսեան մի քանի ամիս առաջ կայացած հանդիպման մը ընթացքին

Պաշտօնական յայտարարութեան մէջ «Ժառանգութիւն»-ը, ժողովուրդին կոչ կ'ընէ անպայման մասնակցիլ Փետրուար 19-ի ընտրութիւններուն, «տեղի չտալ որեւէ ճնշման եւ չվաճառել սեփական ձայնը, առաջնորդուիլ երկրի տիրոջ՝ քաղաքացու վճռորոշ քուէի կեղծումներ եւ հնարաւոր այլ ընտրախախտումներ թոյլ չտալու, արդար ընտրութիւնների անցկացումն ապահովելու քաղաքական ու քաղաքացիական հրամայականով, քուէարկութեան աւարտից յետոյ օրէնքով թոյլատրելի բոլոր միջոցներով վերահսկել արդիւնքների արդարացի արձանագրումը եւ հրապարակումը»:

«Ժառանգութիւն»-ը կոչ կ'ընէ Կուսակցութեան բոլոր անդամներուն ու համակիրներուն պետութեան եւ ժողովուրդի շահերը սպասարկելուն կոչուած ապագայ նախագահի ընտրութիւններուն իրենց որոշիչ ձայնը տալու ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին:

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

## Ի՞ՆՉ ԱՆԻ ՆՈՐՄԱԼ ՄԱՐԴԸ

*Երբ նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանն իր նախընտրական հանդիպումների ժամանակ խօսում է Հայաստանի լաւ ապագայի այլեւայլ բնութագրիչների մասին, թւում է, թէ նա անկեղծ է: Մինչդեռ այդ բնութագրիչներից կարեւորագոյնը՝ օրինականութիւնը, որի մասին եւս, ի դէպ, Սարգսեանը յաճախ է խօսում, ամենակոպիտ ձեւով արհամարհւում է հենց այս՝ նախընտրական օրերին: Եկէք մի պահ մոռանանք, թէ այսօր թեկնածուներն ինչ ծրագրերով են հանդէս գալիս, եւ այդ ծրագրերից որն է աւելի հրապուրիչ: Փորձը ցոյց է տուել, որ Հայաստանում նման տեսական վէճերի մէջ մտնելու եւ նախընտրութիւններն այդ հարթութեան մէջ որոշելու ժամանակը, ցաւոք, դեռ չի եկել: Պարզապէս տեսնենք, թէ ինչ է կատարւում այսօր Հայաստանում եւ ինչպէս կարող է նորմալ մարդը կողմնորոշուել մերօրեայ ընտրական իրականութեան մէջ:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի մարզային հանդիպումների ժամանակ տեղի ունեցող խուլիգանական միջադէպերն ու ակնյայտօրէն տեղական իշխանութիւնների կողմից յարուցուող էժանագին խոչընդոտներն արդէն անցել են բոլոր թոյլատրելի սահմանները (եթէ, իհարկէ, նման բաների համար գոյութիւն ունի թոյլատրելի սահման), եւ արդէն այսօր, ըստ էութեան, ի վիճակի են լրջօրէն ստուերել ընտրութիւնների վերջնական արդիւնքների արժանահաւատութիւնը: Այստեղ ես դարձեալ պէտք է յիշեցնեմ, որ տուեալ պարագայում բացարձակապէս նշանակութիւն չեմ տալիս այն հանգամանքին, թէ թեկնածուներից ով ինչ դրոյթներով է հանդէս գալիս: Ռուսի ասած՝ «նի դա էտովո»: Իրականութիւնն այն է, որ նրանցից մէկը, փաստացի պաշտօնի ու վարչական լծակների բերումով, իր դրոյթները ներկայացնում է ծնծղաների, գոյնզգոյն պլակատների եւ ժպտադէմ ու խանդավառ բազմութեան ապահով ներկայութեամբ, մինչդեռ միւսների (յատկապէս՝ Տէր-Պետրոսեանի) համար միտումնաւոր ստեղծւում են, մեղմ ասած, ոչ աշխատանքային պայմաններ, որոնք, ի դէպ, օրըստօրէ աւելի անտանելի են դառնում:*

*Վերադառնալով մեր նշած խեղճ, նորմալ մարդուն, որը պէտք է այս պայմաններում ընտրութիւն կատարի, տեսնէք, թէ ինչ վիճակում է նա յայտնւում, եթէ անգամ Սերժ Սարգսեանի համոզուած կողմնակիցն է: Մի կողմից նա լսում է օրինականութեան մասին վարչապետ-թեկնածուի ելոյթները, միւս կողմից՝ տեսնում է այն, ինչ տեղի է ունենում: Ու քանի որ, ինչպէս նշեցինք, նա նորմալ մարդ է, ապա ակամայ սկսում է համեմատութիւններ անել, ասենք, ԱՄՆ-ում ընթացող ընտրական գործընթացների հետ: Օրինակ, նա փորձում է ենթադրել, թէ ինչ կը լինէր, եթէ ԱՄՆ բնակավայրերից մէկում շերիֆը կամ ՀՖԲ աշխատակիցները խուլիգանութիւններ հրահրէին ընդդիմադիր դեմոկրատ թեկնածուների հանդիպումների ժամանակ: Համեմատում է ու վերջնականապէս թեւաթափւում:*

*ՏԻԳՐԱՆ ԱՒԵՏԻՍԵԱՆ*
*«ԱՌԱՒՕՏ»*

## ՀԱՆՐԱՅԻՆԸ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆՈՒՄ Է ՎԻՃԱԿԸ

*Ծակատագրի հեգնանքն է երեւի, բայց փաստ է, որ երկրի ներքաղաքական կայունութիւնից տասը տարի շարունակ խօսող Հանրային հեռուստաընկերութիւնը այս օրերին հետեւողականօրէն շարունակում է ապակայունացնել իրավիճակը հանրապետութիւնում:*

*Դրա համար շատ բան հարկաւոր չէ: Բաւական է ընդամէնը ստել եթերից եւ նենգափոխել իրականութիւնը: Այլ բառերով՝ անյաղթահարելի խոչընդոտներ յարուցել ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի համար՝ իր խօսքը հասցնելու ՀՀ քաղաքացիներին:*

**Տեղեկատուական այս շրջափակումը, որի մէջ յայտնուել են Հայաստանի քաղաքացիները, հակապետական գործունէութիւն է, որը յարուցում է պետութեան քաղաքացիների բուռն վրդովմունքը: Թեկնածուներից շատերին եթեր է տրամադրւում ընտրութիւններում յաղթելու հիմնական յաւակնորդին պախարակելու բացայայտ նպատակադրումով**

*Տեղեկատուական այս շրջափակումը, որի մէջ յայտնուել են Հայաստանի քաղաքացիները, հակապետական գործունէութիւն է, որը յարուցում է պետութեան քաղաքացիների բուռն վրդովմունքը: Թեկնածուներից շատերին եթեր է տրամադրւում ընտրութիւններում յաղթելու հիմնական յաւակնորդին պախարակելու բացայայտ նպատակադրումով, աղաւաղուած են ներկայացւում նրա նախընտրական հանդիպումներն ու հանրահաւաքները, ժողովրդական հսկայ զանգուածի աջակցութիւնը վայելող թեկնածուի դէմ իրականացուած հակաօրինական գործողութիւնները եթերից խրախուսւում են ՀՀ ոստիկանութեան, երկրի նախագահի աթոռը զբաղեցնող Ռոբերդ Քոչարեանի, զանազան իշխանամէտ գործիչների յայտարարութիւններով: Սրան զուգահեռ չափաբաժինը Հանրայինի եթերում: Հանրայինի եթերից ձգտում են հետ չմնալ մնացած հեռուստաընկերութիւնները:*

*Այս գործելակերպը, բնականաբար, արժանանում է համաժողովրդական նողկանքի: Մարդկանց մէջ ահագնանում է ըմբոստութիւնը: Այսօր արդէն պետութեան հանդէպ քաղաքացիների անվստահութիւնը հասել է աղետալի չափերի, քանի որ Հանրային հեռուստաընկերութիւնը ընկալւում է իբրեւ պետութեան խօսափող:*

*Ի՞նչ է ստացւում. պետութեան խօսափողը ձգտում է ամէն գնով ապակայունացնել իրավիճակը: Պետութիւնն, այսինքն, ծաւալել է հակաժողովրդական հակապետական գործունէութիւն:*

*Ռոբերդ Քոչարեանին, Սերժ Սարգսեանին, Ալեքսան Յարութիւնեանին «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի հերոսը այս ամենից յետոյ արհամարհանքով կը հարցնէր. «Տո, դու ե՞ս պետութիւնը...»:*

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ*
*«ՏԱՐԵԳԻՐ»*

## ԱՄԵՆԱԱՆՄԱՏՉԵԼԻ ՍԵՅՖԵՐԻՑ

*ՀՀ առաջին նախագահ, նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբը վերջին շրջանում ստանում է բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք վկայում են իշխանական բուրգի խարխլման մասին:*

*Տարբեր մարմինների միջին, յաճախ նաեւ բարձրաստիճան պաշտօնեաներից ոչ միայն քաջալերական մեսիջներ են գալիս, այլ նաեւ*

Ի տարբերութիւն նախորդ ընտրութիւնների, շատ-շատերը հրաժարւում են կատարել ընտրակաշառք բաժանողի դերը նոյնիսկ այն դէպքում, երբ բաժանելիք փողից նրանց զգալի տոկոս է առաջարկւում՝ որպէս վարձատրութիւն: Պատճառն այն է, որ նրանք չեն հաւատում Սերժ Սարգսեանի յաղթանակին, իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանի յաղթանակի դէպքում գիտեն, որ կանգնելու են դատական պատասխանատուութեան առջեւ:

*գործնական օժանդակութիւններ: Հանրապետութեան ոստիկանութիւնից, ԱԱԾ-ից, թաղապետարաններից, նոյնիսկ Նախագահի աշխատակազմից ստացուել է բազմազան տեղեկատուութիւն:*

*Օրինակ՝ այն մեխանիզմների նկարագրութիւնը, որով յանցաւոր վարչախումբը փորձելու է կեղծուել ընտրութիւնները: Եւ ոչ միայն դա, այլ նաեւ խորհուրդներ են տրւում, թէ ինչպէս դրանք կարելի է կանխարգելել: Երեւանի մեծ մասի եւ մարզերի մի մասի համար արդէն շտաբի ձեռքի տակ կան այն մարդկանց ցուցակները, որոնց միջոցով պէտք է կատարուի ընտրակաշառքների բաժանումը: Ընդորում՝ տեղեկութիւնների հաղորդողները նաեւ արձանագրում են, որ, ի տարբերութիւն նախորդ ընտրութիւնների, շատ-շատերը հրաժարւում են կատարել ընտրակաշառք բաժանողի դերը նոյնիսկ այն դէպքում, երբ բաժանելիք փողից նրանց զգալի տոկոս է առաջարկւում՝ որպէս վարձատրութիւն: Պատճառն այն է, որ նրանք չեն հաւատում Սերժ Սարգսեանի յաղթանակին, իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանի յաղթանակի դէպքում գիտեն, որ կանգնելու են դատական պատասխանատուութեան առջեւ: Եւ նրանց մտահոգութիւնը տեղին է: Մենք չենք շտապում հրապարակել այդ ցուցակներից ոեւէ մէկը, քանի դեռ այդ մարդկանց կողմից տուեալ յանցանքը չի կատարուել:*

*Տէր-Պետրոսեանի շտաբը ստացել է նաեւ շատ աւելի կարեւոր ու լուրջ փաստաթղթեր, որոնք պահւում են եզակի օրինակներով երկրի բարձրագոյն իշխանաւորների ամենաանմատչելի սեյֆերում: Դրանցից մէկի մասին տասը տարի անընդհատ խօսուել է, իսկ վարչախումբը հետեւողականօրէն դա ժխտել է: Խօսքը վերաբերում է Քոչարեանի առաջարկութեան հիման վրայ համանախագահների կազմած կարգաւորման այն ծրագրին, որի համաձայն՝ Մեղրիի շրջանը պէտք է զիջուէր Ատրպէյճանին՝ Լաչինի փոխարէն: Դա 1999 թուականի աշնան էր: Երբ նա դա ներկայացրել էր Անվտանգութեան խորհրդում, Քոչարեանին կտրուկ ու կոպիտ դէմ էին արտայայտուել Վազգէն Սարգսեանը եւ Կարէն Դեմիրճեանը՝ դուրս գալով եւ դուռը խփելով նրա երեսին: Իսկ մի քանի շաբաթ յետոյ կատարուեց Հոկտեմբերի 27-ի ոճրագործութիւնը:*

*Որոշ վերլուծաբաններ այս երկու փաստերի մէջ պատճառահետեւանքային կապ էին տեսնում: Վարչախումբը ժխտում էր նման փաստաթղթի գոյութիւնը: Մեղրին յանձնելու մասին փաստաթուղթն այսօր մեր ձեռքում է:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

*ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*
*ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝*
*ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*
*Արեւմտեան Ամերիկայի Շրջանի*
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*
**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ԳԻՒՄՐԻԻ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ ԲԱԶՄԱՄԱՐԴ ԷՐ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:* Փետրուար 10-ին Գիւմրի քաղաքի Թատերական հրապարակում հաւաքուել էին ինչպէս գիւմրեցիներ, այնպէս էլ Շիրակ մարզի հեռաւոր գիւղերի բնակիչներ, որոնք եկել էին մասնակցելու Նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի հրաւիրած հանրահաւաքին: Շիրակի մարզի բազմաթիւ բնակիչները ջերմ ընդունելութիւն են ցոյց տուել առաջին նախագահին: Մէկ ժամից աւել տեւած հանրահաւաքի ընթացքում Լեւոն Տէր-Պետրոսեանը քննադատել է իշխանութիւններին, ինչն արժանացել է հրապարակում հաւաքուածների ջերմ արձագանքին: Գիւմրիում ելոյթ է ունեցել նաեւ ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճեանը: Յիշեցնենք, որ մի խումբ գիւմրեցիներ մասնակցել են նաեւ երեկ Երեւանում տեղի ունեցած հանրահաւաքին: Նրանք իրենց հետ մի մեծ պաստառ էին բերել, որի վրայ գրուած էր. «Գիւմրին Լեւոնին թեւ ու թիկունք է»:


Տեսարան մը Գիւմրիի հանրահաւաքէն

Նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանը Գիւմրուց ուղեւորուել է Աշտարակի Ուջան գիւղ:

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՉԲԱՒԱՐԱՐԵՑ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՊԱՀԱՆՋԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Հայաստանի Սահմանադրական դատարանը այսօր քննելով Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի դիմումը «2008 թուականի նախագահական ընտրութիւններում ՀՀ Նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի համար առաջացած խոչընդոտները անյաղթահարելի ճանաչելու» խնդրանքով, ինչպէս նաեւ թեկնածուի վստահուած անձանց ներկայացրած փաստարկները, որոշեց, որ դրանք չեն կարող համարուել «անյաղթահարելի խոչընդոտներ»:


Տէր-Պետրոսեանին ներկայացուցիչ Ռուբէն Թորոսեան ելոյթ կ'ունենայ Սահմանադրական Դատարանի առջեւ

Հայաստանի Սահմանադրական դատարանում նախագահի թեկնածու Լեւոն Տէր--Պետրոսեանին ներկայացնող Ռուբէն Թորոսեանն ու Արտակ Զէյնալեանը մօտ մէկ ժամ զեկուցեցին իրենց հաւաքած այն տուեալների մասին, որոնցով հիմնաւորում են, թէ թեկնածուից անկախ պատճառներով, ընտրութիւններում նրա համար անյաղթահարելի խոչընդոտներ են առաջացել: Այդ պատճառներից մէկը, Ռուբէն Թորոսեանի պնդմամբ՝ «Հայլուր»-ն է, որը Տէր-Պետրոսեանի քարոզարշաւը «ահաւոր ձեւով» է ներկայացնում:

Ներկայացուցիչների պնդմամբ՝ հեռուստատեսային հակաքարոզը նախագահի թեկնածուն ստիպուած է փոխլրացնել վատ եղանակին մարզային այցելութիւններով, սկաւառակներ թողարկելով ու բաժանելով, ինչն էլ, իր հերթին ուղեկցւում է «բռնութիւններով հանրահաւաքների ժամանակ կամ սկաւառակ բաժանողների, իրենց շտաբայինների դէմ»:

Արտակ Զէյնալեանը պնդեց, որ մինչեւ Սահմանադրական դատարան դիմելը ջանք չեն խնայել թեկնածուի առջեւ ծառացած խոչընդոտները վերացնելու. հայց են ներկայացրել վարչական դատարան, դիմում-բողոքներ՝ կենտրոնական ընտրական յանձնաժողով եւ Հեռուստատեսութեան ու ռադիոյի ազգային յանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալեանին, բայց՝ «որեւէ արձագանք չկայ»:

Ներկայացուած այս փաստարկների վերաբերեալ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «նախագահի թեկնածուի վստահուած անձանց այս գործողութիւններն իրաւաչափ են, բխում են օրէնքի պահանջներից

եւ Հայաստանի Հանրապետութեան կենտրոնական ընտրական յանձնաժողովի, Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան վարչական դատարանի խնդիրն է իրենց իրաւասութեան շրջանակներում օրէնքով սահմանուած կարգով ու ժամկէտներում ապահովել զանգուածային լրատուամիջոցների կողմից Հայաստանի Հանրապետութեան Ընտրական օրէնսգրքի եւ «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքի պահանջների յստակ կատարումը»:

# «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի» ԳՈՐԾԸ ՉԻ ՎՆԱՍՈՒԵԼ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:* «Հոկտեմբերի 27-ի գործը մեզ մօտ չկայ եւ ընդհանրապէս, քաղաքական աղմկայարոյց գործեր մեզ մօտ չեն եղել»,- հրդեհի արդիւնքում ոչնչացուած փաստաթղթերի վերաբերեալ «Ա1+»-ի հարցին ի պատասխան ասաց ՀՀ արդարադատութեան նախարարութեան մամլոյ ծառայութեան ղեկավար Լանա Մշեցեանը: Նա, սակայն, տեղեկացրեց, որ շատ մեծ կորուստներ կան փոխնախարար Գէորգ Կոստանեանի մօտ, որը նաեւ Եւրոդատարանում ՀՀ կառավարութեան ներկայացուցիչն է: Լանա Մշեցեանը տեղեկացրեց, որ ամբողջութեամբ վառուել է անձնական գործերի արխիւը, աշխատանքային եւ զինուորական գրքոյկները, ինչի վերականգնման նպատակով յանձնաժողով է ստեղծելու, որը կ'զբաղուի տուեալների վերականգնմամբ: 90 տոկոսով պահպանուել է նոտարի եւ Զագսի արխիւը: Աշխատակազմի ջանքերով յաջողուել է փրկել տեխնիկայի 50 տոկոսը եւ համակարգիչների մեծ մասը, որտեղ պահւում էր շատ կարեւոր տեղեկութիւններ:


Հայաստանի Արդարադատութեան նախարարութեան շէնքը կրակներու մէջ

Շաբաթ օրը բռնկուած հրդեհի հետեւանքով, նախնական տուեալներով, այրուել են շէնքի տանիքը, 3-րդ, 4-րդ հարկերը, մասամբ 2-րդ հարկը՝ փորձագէտների բիւրոն:

Արդարադատութեան նախարարը ժամանակաւորապէս կը տեղափոխուի Հալաբեան փողոցի վրայ գտնուող Հարկադիր ակտերի կատարման վարչութիւն, նախարարութեան նոտարական գրասենեակը եւ զագսի բաժինը՝ պետռեգիստրի շէնք, փոխնախարար Գէորգ Կոստանեանը՝ քրէակատարողական վարչութիւն: «1,5- 2 ամսից ամբողջ նախարարութիւնը կը տեղափոխուի Հալաբեանի վրայ, որը մեծ ընդարձակ շէնք է եւ այժմ իրականացւում են վերանորոգման աշխատանքներ: Նախարարութիւնը ժամանակաւորապէս կը տեղափոխուի այնտեղ մինչեւ կը վերականգնուի այրուած շէնքը, դա պարզապէս ժամանակի հարց է»,- ասաց Լանա Մշեցեանը:

# ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՏԱԲՆԵՐԻ ՎՐԱՅ

Ոստիկանութիւնը յայտնում է, որ այսօր ժամը 11--ի սահմաններում անյայտ անձինք հրկիզել են Երեւանի Ազատութեան պողոտայի 12 հասցէում գտնուող Նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանի նախընտրական շտաբի մուտքի դուռը: Հաղորդագրութեան համաձայն՝ պատճառուել է զգալի չափերի հասնող գոյքային վնաս:

Միեւնոյն ժամանակ դատախազութիւնը յայտնում է, որ փետրուարի լոյս 10--ի գիշերը անյայտ անձը, պատուհանի ապակին կոտրելով, դիւրավառ հեղուկով լցուած ապակեայ տարա է նետել Երեւանի Յաղթանակ թաղամասի 6--րդ փողոցի 31 հասցէում գտնուող Սերժ Սարգսեանի նախընտրական շտաբը: Բռնկուած կրակից այրուել է ակումբային աթոռը եւ ստուարաթղթէ արկղը:

Դատախազութիւնը նաեւ տեղեկացնում է, որ այսօր առաւօտեան անյայտ անձը Մարտունի քաղաքի բնակելի շէնքերի պատերին փակցրել է սեւական բնոյթի հայհոյանքներ պարունակող թռուցիկներ՝ ուղղուած Սերժ Սարգսեանին եւ Մարտունի քաղաքի մի շարք պաշտօնական անձանց:

Բոլոր երեք միջադէպերի կապակցութեամբ յարուցուել են քրէական գործեր, կատարւում է նախաքննութիւն:

# ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ. «ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՄԻԱՒՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Փետրուարի 19-ի ընտրութիւններում նախագահի թեկնածու, «Օրինաց երկիր» կուսակցութեան առաջնորդ Արթուր Բաղդասարեանը չի բացառում, որ մինչեւ քուէարկութիւնը ընդդիմադիր դաշտում լինեն միաւորումներ:

«Բանակցային գործընթաց այսօր կայ եւ այդ գործընթացը շարունակւում է», - հայաստանեան հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ հանդիպմանը երկուշաբթի օր փոխանցեց Բաղդասարեանը՝ շարունակելով. - «Մենք հարիւր հազարանոց թիմ ենք: Այսօր տարբեր կուսակցութիւններից, այդ թւում՝ իշխող կուսակցութիւններից մեզ համար աշխատում եւ քարոզում են»:

«Յանկացած միաւորում», - ասաց նա, - «պէտք է լինի փաստարկուած, հանրութեան, ժողովրդի համար հասկանալի: Եւ ցանկացած միաւորում պէտք է բերի շատ լաւ արդիւնքների: Ուզում եմ ասել, ես չեմ էլ բացառում, որ նման միաւորումներ դեռ կարող են լինել... Ինչպէս մինչեւ առաջին փուլը, եւ այդ անուն գրելը ոչ մի նշանակութիւն չունի: Կարող է անունը քուէարթերթիկում լինի, բայց մարդը իր դիրքորոշումը արտայայտի, ժողովուրդն էլ լսի...»:

«Ինչպէս առաջին փուլում, այնպէս էլ երկրորդ փուլում ընդդիմութեան միաւորումը համարում եմ քաղաքական անհրաժեշտութիւն», - յայտարարեց նախագահի թեկնածուն:

Արթուր Բաղդասարեանը համոզմունք յայտնեց, որ ընտրութիւնները անցնելու են երկու փուլով: Աւելին, ըստ թեկնածուի՝ պարտադիր չէ, որ իշխանութեան թեկնածուն լինի երկրորդ փուլում:

Անդրադառնալով սոցիոլոգիական հարցումների արդիւնքներին՝ Բաղդասարեանը ասաց, որ թերահաւատօրէն է վերաբերում դրանց. - «Քուէարկութիւնը ցոյց կը տայ, թէ ոնց կը լինի»:

Հանդիպման ընթացքում Արթուր Բաղդասարեանը հաւաստիացրեց, որ իրենք անզիջում պայքարելու են ընտրակեղծիքների դէմ:

## ԱՂՈՒԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ. «ՀԱՆՐԱՀԱՒԱՔՈՒՄ ՔԱՐԵՐ ՉԵՆ ՆԵՏՈՒԵԼ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը ուրբաթ օրը յայտարարեց, որ Փետրուարի 6-ին Արտաշատում նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի հանրահաւաքի ժամանակ տեղի ունեցած միջադէպի ընթացքում «քարեր չեն նետուել ելոյթ ունեցողների վրայ կամ բեմի վրայ»:*



*Իշխանութիւններու կամակատար Գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեան*

*«Ուսումնասիրութեան ենք ենթարկել այդ հանրահաւաքի տեսաժապաւէնները, որտեղ ակնյայտօրէն երեւում է, որ որեւէ քարեր չի նետուել ելոյթ ունեցողների վրայ կամ բեմի վրայ», - Գլխաւոր դատախազութեան կոլեգիայի ընդլայնուած նիստի ընդմիջմանը լրագրողներին ասաց Աղուան Յովսէփեանը:*

*Նա անդրադարձաւ նաեւ նախագահի մէկ այլ թեկնածու՝ «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանի՝ Փետրուարի 3-ին հանրահաւաքում հնչեցրած յայտարարութիւնը, թէ իրեն սպառնացել են:*

*Գլխաւոր դատախազը յիշեցրեց, որ գրաւոր յանձնարարական էր տուել Ոստիկանութեան պետին՝ քրէական գործ յարուցել եւ ձեռնարկել օպերատիւ միջոցառումներ, ինչի համար «անհրաժեշտ էր ստանալ մի շարք հարցերի պատասխաններ». - «Ինչպիսին են եղել սպառնալիքները՝ գրաւո՞ր, բանաւո՞ր: Եթէ բանաւոր՝ ինչպէ՞ս: Եթէ հեռախօսով՝ ո՞ր հեռախօսով: Որպէսզի մենք պարզէինք... Առ այսօր մեզ այդ հնարաւորութիւնը չի տրուել»:*

*«Մենք բազում անգամներ դիմել ենք պարոն Բաղդասարեանին» - շարունակեց նա: - «Ոստիկանութիւնը գրաւոր է դիմել՝ խնդրելով ներկայացնել հիմքեր, որպէսզի կարողանան ստուգումները մինչեւ վերջ իրականացնել: [Բաղդասարեանը] Ընդունել է հանրապետութեան քրէական հետախուզութեան վարչութեան պետին իրենց գրասենեակում եւ [զրոյցի] ընթացքում նոյնպէս որեւէ տուեալներ չի ներկայացրել, որպէսզի մենք հիմք ունենանք համարել սա իրական սպառնալիքներ եւ կատարել անհրաժեշտ քննութիւն»:*

*Արթուր Բաղդասարեանը, ով «Ազատութիւն» ռադիոկայանի «կլոր սեղանի» հիւրն էր, այս կապակցութեամբ ասաց. - «Իմ յայտարարութիւնը խիստ փաստարկուած է: Ես իմ յայտարարութիւնը հնչեցրել եմ՝ կանխարգելելու համար այն սպառնալիքները, որոնք հնչել են իմ հասցէին: Ես ասել եմ, եթէ իմ հետ ինչ-որ մի բան կը պատահի՝ կը հնչեցուեն անուն-ազգանուններ: Դա հիմա չի հնչեցւում, որովհետեւ մենք չենք կարող վտանգել նաեւ այն մարդկանց կեանքը, որոնք փոխանցել են մեզ դա»:*

*«Հեռախօսազանգ էլ է եղել այլ մարդու: Նման հեռախօսազանգ, կոնկրետ, որ ինձ զանգել են, չի եղել», - շարունակեց նա՝ պնդելով. - «Յստակ հնչել են սպառնալիքներ»:*

*Արթուր Բաղդասարեանը ասաց, որ Ոստիկանութեան քրէական հետախուզութեան գլխաւոր վարչութեան պետ Միլիտոնեանի հետ նախօրէին կայացած հանդիպման ժամանակ իրեն տուել են գրաւոր նամակ. - «Ես այսօր այդ գրաւոր նամակին կը պատասխանեմ: Մնացածը իրենց խնդիրն է: Եթէ իմ հետ կը պատահի մի բան, թող այն ժամանակ Հայաստանի իրաւապահ մարմինները պատասխանատուութիւն կրեն»:*

## ԵՈՒՍՏ ԼԱԳԵՆԴԻՅԿ. «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ, ՈՉ ԹԷ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅԼ ԻՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ»




*Թուրք ցուցարարներ արդարութիւն կը պահանջեն Հրանդ Դինքի*

*Թուրքիա - Եւրամիութիւն միջխորհրդարանական յանձնաժողովի համանախագահ Եուստ Լագենդիյկը, որն այսօր ներկայ է եղել «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութեան գործով դատավարութեանը, յորդորել է Թուրքիայի իշխանութիւններին փոխել քրէական օրէնսգրքի 301 յօդուածը, որը պատիժ է սահմանում «Թուրքական ինքնութիւնը վիրաւորելու» համար:*

*«Եւրամիութեան համբերութիւնը հատնում է: Այն, ինչ մենք ակնկալում ենք Թուրքիայի ղեկավարներից, ոչ թէ գեղեցիկ յայտարարութիւններն են, այլ իրական քայլերը»,- - ասել է Լագենդիյկը:*

*Նա նաեւ յորդորել է Թուրքիայի իշխանութիւններին լիովին բացայայտել նրանց, «ովքեր կանգնած են Դինքի սպանութեան հետեւում»:*

*17-ամեայ ենթադրեալ մարդասպանը, որը խոստովանել է արարքը, եւ 18 այլ անձինք դատաքննութեանն են մասնակցում անցած տարուանից:*

*«Եթէ այս գործը պատշաճ կերպով չքննուի, դա ստուեր կը գցի Եւրոպայում Թուրքիայի իմիջի վրայ»,- - ասել է Լագենդիյկը:*

*«Ֆրանսպրես»--ի վկայութեամբ՝ մօտ 1000 ցուցարարներ այսօր դատարանի շէնքի առջեւ վանկարկել են՝ «Յանուն Հրանդի, յանուն արդարութեան»:*

*Դատավարութիւնն ընթանում է փակ դռների հետեւում, քանի որ Դինքի սպանութիւնը խոստովանած պատանին անչափահաս է:*

*Լագենդիյկը եւ Թուրք պատգամաւորների խումբը դահլիճում գտնուելու յատուկ թոյլտուութիւն էին ստացել դատաւորից:*

*Միաժամանակ այսօր մի խումբ Թուրք մտաւորականներ եւ քաղաքական գործիչներ յայտարարութիւն են տարածել, որով կոչ են անում ապահովել Հրանդ Դինքի սպանութեան գործի «արդար եւ Թափանցիկ» քննութիւնը:*

## 150 ՀԱԶԱՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԻՆ

*Շարունակուած էջ 1-էն*

*Յակոբ Յակոբեանը:*

*«Մենք՝ ազատամարտիկներս, նորից պատրաստակամութիւն ենք յայտնում, որ կը կանգնենք ազատ, արդար ընտրութեան համար: Որ չփորձեն խախտումներ անել», - յայտարարեց Սասուն Միքայէլեանը, եւ դիմելով Լեւոն Տէր-Պետրոսեանին ըսաւ. - «Ես յաջողութիւն եմ մաղթում Ձեզ, պարոն նախագահ»:*

*Հանրահաւաքին ներկայ ժողովուրդին առջեւ իր ունեցած ելոյթի ընթացքին Տէր-Պետրոսեան ըսաւ թէ, կը նկատէ որ մարդիկ դեռ վախեցած են. - «Ես գալիս եմ, որպէսզի դուք այլեւս երբեք իշխանութիւններից չվախենաք, ոստիկանից չվախենաք, հարկահանից չվախենաք»:*

*«Իշխանութիւններն այս ընտրարշաւն արդէն տանուլ են տուել, այլապէս չէին վախենայ խօսքից»,- յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեան: «Այս հանրահաւաքը եւ մեր համաժողովրդական շարժումը համեմատւում է 1988 թուականի հետ. սա կարծես թէ լաւ բան է, բայց դա ինձ չի ուրախացնում այն պատճառով, որ անկախութեան 18-րդ տարում մենք ստիպուած ենք նորից բռնել յեղափոխական ճանապարհ. ընտրութիւնը պէտք է լինէր հանդարտ, օրինական մի պրոցէս, որտեղ ընդամէնը տեղի է ունենում իշխանութեան փոխանցում նախորդ իշխանութիւններից յաջորդ իշխանութեանը. մենք կ'երազէինք ապրել այդպիսի երկրում, որտեղ իշխանութիւնը փոխանցւում է միայն այդ եղանակով: Որտեղ իւրաքանչիւր իշխանութիւն դնում է իր քարը պետական կառոյցի վրայ, եւ հանդարտ արժանապատիւ հեռանում»:*

*Տէր-Պետրոսեան ապա յայտարարեց. «Զի իրականացել մեր ազատ, անկախ, արժանապատիւ պետութիւն ունենալու երազանքը: Մեր պետութիւնը դեռեւս նորմալ պետութիւն չէ, որտեղ քաղաքական ընդդիմախօսները յարգէին իրար, խաղային նոյն խաղի կանոններով, մէկը խաղում է շախմատ, միւսը քիքբոքսինգ»:*

*Տէր- Պետրոսեան նկատեց, որ մէկ կողմը Սերժ Սարգսեանն է, որպէս այսօրուայ իրականութեան պատասխանատուներէն եւ պարագլուխներէն մէկը, միւս կողմը՝ ժողովուրդը: «Սրանք պղծել են մեր հայրենիքը, ոտնահարել են մեր արժանապատուութիւնը, արհամարհել եւ քամահրել են մեր մշակոյթը, սրանք մարդիկ են, որ Հայաստան են եկել քոչուորի հոգեբանութեամբ, ում խնդիրն է աւերել, ամայացնել նուաճուած տարածքը, վստահ լինելով, որ կը գտնեն մի նոր տարածք իրենց աւերը շարունակելու համար: Ուրիշ հոգեբանութիւն չկայ»:*

*Իր ելոյթի ընթացքին ՀՀ առաջին նախագահը բացայայտեց մեծագոյն դաւադրութիւն ՀՀ հանդէպ, որ իրականացնելու կը պատրաստուէին Ռոբերդ Քոչարեանը, Սերժ Սարգսեանը եւ Վարդան Օսկանեանը:*

*«Դա եղել է խօսակցութիւնների առարկայ, շշուկներ եղել են այս հարցի շուրջ, բայց իշխանութիւնները՝ նախագահի, վարչապետի, ԱԳՆ-ի բերանով մշտապէս հերքել են այդ փաստը. դա Մեղրիի եւ Ղարաբաղի փոխանակման հարցն է, այսօր այդ դաւադրութիւնը բացայայտուած է»,- յայտարարեց Տէր-Պետրոսեանն ու ընթերցեց հատուած այն պայմանագրէն, որ պատրաստ էին ստորագրել Քոչարեանը, Սերժ Սարգսեանը եւ Օսկանեանը: Տէր-Պետրոսեան յայտարարեց, որ փաստաթուղթը վաւերական է եւ ընդամէնը երկու յօդուած կարդաց. «Սոյն համաձայնագիրը ուժի մէջ մտնելուց յետոյ նախկին ԼՂԻՄ տարածքը, Շուշիի շրջանն ու Լաչինի շրջանը փոխանցւում են ՀՀ-ին. սոյն համաձայնագիրը ուժի մէջ մտնելուց յետոյ Մեղրիի շրջանը 1988 թուականի սահմաններով փոխանցւում է Ատրպէյճանի Հանրապետութեանը»:*

*Այս խօսքերէն յետոյ Ազատութեան հրապարակը պայթեցաւ «Ամօթ, ամօթ» վանկարկումներով:*

*Հանրահաւաքի աւարտին տեղի ունեցաւ երթ, որ անցաւ Երեւանի կենտրոնական փողոցներով՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ:*

NOR SEROUNT TV LIVE
CHARTER CABLE CHANNEL 26
GLENDALE - BURBANK
EVERY THURSDAY 10.00 to 11.00 PM

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ՊԱՀԸ ԵԿԵԼ Է ՄԻԱԲԱՆՈՒԵԼՈՒ
## «ԳԵՂ ՈՐ ԿԱՆԳՆԻ, ԳԵՐԱՆ ԿԸ ԿՈՏՐԻ...»

*Մենք չենք ասում ինչ մտածէք, այլ ցանկութիւնն է, որ մտածէք լրջօրէն, թէ ինչ է կատարուելու, եթէ այսպէս շարունակուի: Մեր ժողովրդի հանճարը նրա մէջ է, որ պատմութեան բոլոր վերիվայրումներում կարողացել է գտնել ապրելու կերպը, եւ չի կորցրել իր ազգային հպարտութիւնը: Մենք պէտք է խղճի քաջութիւն ունենանք հաւատալու Լեւոն Տէր-Պետրոսեանի հայրենասիրութեանը, հիանալի մարդկային որակներին, բացառիկ մտաւոր կարողութիւններին քաղաքագէտ լինելու տաղանդին, եւ նրա օգնութեամբ հեռացնելու մեր ժողովրդի գլխին պատուհաս դարձած՝ այս ինքնակոչ կառավարութեանը, որ քան ու քարափ արեց մեր երկիրը, մեր մշակոյթը եւ ժողովրդին հասցրեց աղքատութեան դուռը: Բազմաթիւ մտաւորականներ, արուեստագէտներ, երկրից դուրս եկած տարբեր մասնագիտութիւնների տէր մարդիկ սպասում են, որ այդ նիւթապաշտ-պատեհապաշտ, երկիրը դէպի անդունդը տանող յաւակնոտ մարդիկ՝ որոնք չեն ճանաչում մեր պատմական անցեալը, մեր հոգեբանութիւնը, մեր մշակոյթի ուժը՝ որով գոյատեւել ենք դարեր շարունակ: Հեռանա՛ն: Ցաւոք՝ անցան այն երանելի ժամանակները, երբ հայ ժողովուրդը ազգային զարթօնք էր ապրում եւ զարմանալիօրէն միաբանուել էր: Ժողովուրդն ինքն իրեն ազատագրել էր բոլոր կապանքներից, ոգեւորութիւնն էր տիրում, ու իր երկրի ու պահանջի տէրն էր դարձել: Օտարացած էր վախի զգացումը: Եւ այդ միլիոնանոց հանրահաւաքներին ով մասնակցել է, կամ ականատես եղել՝ իրեն չափազանց հպարտ է զգում: Անբռնաբոյս, ներշնչուած, ազգային զարթօնք էր, որ հայ ազգի համար վճռորոշ նշանակութիւն ունեցաւ: Մենք էինք՝ մեր երկրում, մեր ճակատագրի հետ: Մեզ համար անծանօթ՝ խորամանկ ճանապահներով, երկիր խուժողներ դեռեւս չկային: Կար վճռականութիւն, հայ մտքի իմաստնութիւն, նոր անկախացած երկիր, եւ վեհ ցանկութիւն՝ հիմքը դնելու՝ բարեկեցիկ, ազատ, արժանապատիւ կեանքի:*

*Այդ գաւառացի յաւակնոտները դեռեւս չէին իրականացրել իրենց դաժան եւ գաւթողական ծրագրերը: Այնքան մեծ էր նրանց ախորժակները, որ ազգընտիր նախագահին հրաժարել տալուց յետոյ էլ՝ այնպէս հիպնոզացրին Հայաստանի ժողովրդին, որ նա նոյնիսկ կուլ տուեց ազգային ժողով սպանդը... Եւ սկսեց վախենալ ասելով, – Այս մարդիկ ամէն ինչի ընդունակ են... Նրանք օտար մնացին մեզ... Եւ չհասկացան, որ Հայաստանի օրէնսդրութեան աղաւաղումը եւ իրենց յափշտակողական ծրագրերը՝ ոչ մի կապ չունեն եւ չեն համապատասխանում ժողովրդի եւ պետութեան շահերի հետ: Հայաստանի ապագան վտանգուած է... Մենք անկախ չենք մեր երկրում այնքան ժամանակ, որքան բռնաբարւում են մեր իրաւունքները... Ո՛չ ոք իրաւունք չունի իրենց օրէնքից վեր դնելու... Ոտնակոխելով ժողովրդի արժանապատւութիւնը, ամբոխահաճութեամբ զբաղուելով, ժողովրդին ընտրակաշառք աղքատաբաժին տալով, պահանջագրեր հաւաքելով՝ ուզում էք ինքներդ ձեզ նորից պարտադրել: Միթէ՞ պահանջագրերը կաշառքի ձեւ չեն... Այս անգամ խարդախութեամբ ու ուժի ճնշմամբ ընտրուելու զուբայութիւնը չի անցնելու... Ժողովուրդը ոտքի է ելել...*

*Այդ երկուսը մինչեւ հիմա չեն հասկացել, որ սեպի նման խրուել են Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի երկու հատուածի միջեւ, ու ատելութիւն են սերմանում իրար նկատմամբ: Այն Հայաստանի, որի ժողովուրդը ցուրտ ու մթի մէջ մնաց, որպէսզի Ղարաբաղը լոյս ունենայ, հացի համար հերթ կանգնեց, որպէսզի Ղարաբաղցին կարկանդակ ուտի... Չեն հասկանում, որ ժողովրդի համբերութեան բաժակը լցուել է, եւ վճռականութիւնը հասել է այն կէտին, որ հրապարակայնօրէն պահանջում է իրենց անհապաղ հեռացումը... Թո՛յլ տուէք մենք կերտենք, մե՛ր ձեռքերով, մե՛ր ճաշակով կառուցենք մեր երկիրը: Դուք մեզ չէք ճանաչում, դուք մեր հոգին ու մեր տեսակը չէք հասկանայ:*

*Մենք խզե՛լ ենք մեր լռութիւնը...*

*Այս ամօթալի տարիները ոչ մի կապ չունեն մեր որակի ու մեր անցեալի հետ...*

*Այս օրերին Հրանտ Մաթեւոսեանի հոգին սաւառնում է Հայաստանի վրայ, որ երկրում տիրող վիճակից՝ այրուեց, դարդամահ եղաւ: Այդ մեծ գրիչը, արուեստագէտ-պատմագէտ ազգասէրն ու հպարտ հայորդին, որի ներկայութեան ու խորհուրդների կարիքը այնքան ունի Հայաստանի ժողովուրդն այսօր...*

*Նրա գրութիւնից մի հատուած, որի ամէն բառը մի կրակոց է՝*

*– «Ո՞րը, Մարդը՞, թէ ողորմելին, հպարտը՞, թէ ճորտը, տէրը՞, թէ գրպանահատը, մշակը, թէ չարչին: Նորից, աւելի քան երբեւէ՝ կռիւ է, օրհաս է: Դու արթնանալ գիտես, դու յաղթել գիտես: Դո՛ւ, քո տեսակն է յաղթելու: Յաղթելո՛ւ է առաջ շարժուի, յաղթելո՛ւ է ու մշտնջենական թուացող արատաւոր այս շրջանը քար առ քար փոշիացին, որ սերունդների ո՛տքն էլ քարին չառնի... Մի՛ վախեցիր, մի՛ թող որ վախենան, ա՛չքը հանիր վախեցողների...»*

**«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ»**
*Սփիւռքահայ Մտաւորական Նոյնախոհների Յանձնախումբ*
*e-mail-ի հասցէն է՝* ardarutiun@gmail.com

### ՌԵՊԼԻԿ
# ՀՈԳԻՆԵՐԸ ԾԱԽԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

*Աշխարհի բոլոր երկրներում, նախագահական ընտրութիւնների ժամանակ, արուեստի մարդիկ պաշտպանում են այս կամ այն թեկնածուին: Օրինակ մեզ մօտ՝ Ամերիկայում, Տրնիրոն եւ Ստալոնը մի թեկնածուի կողմն են, Շվարցնեկըրը՝ մի ուրիշի, երրորդ մի աստղ այլ թեկնածուի է սատարում: Բնական է Հայաստանում, սակայն, աշխարհում ընդունուած չափորոշիչները ոչինչ չեն նշանակում: Իրենց աստղ յորջորջող երգիչ-երգչուհիները, ստորաքարշութեան թիկնոց հագած հոգիներ ծախելու արուեստով են զբաղուած:*

*Արուեստի աստղերը գոռում են՝ միայն քաղաքական մի գործիչ կայ՝ Սերժիկ Սարգսեանը: Մոռանում են որ նրանց ճանապարհը դէպի մեծ բեմ բացեց Առաջին նախագահը՝ Երրորդ հանրապետութեան արշալոյսին: Լ. Տէր-Պետրոսեանը՝ ինքը երեւելի մտաւորական է եւ միշտ նեցուկ է երիտասարդութեան համար:*

*Մենք լաւ գիտենք Նունէ Եսայեանին, Շուշան Պետրոսեանին, Ալլա Լեւոնեանին, Աշոտ Ղազարեանին, Սիւզան Մարգարեանին, Անդրէին, Հայկոյին, Արսէն Սաֆարեանին եւ այլոց: Մենք հաւատում էինք նրանց երդումներին, որ իրենց երգը ժողովրդի համար է: Պարզւում է որ ստում են՝ նրանց երգը միայն քաջարի Սերժի համար է: Ինչու... որովհետեւ փող ու տուն է տալիս, մեքենայ եւ ամառանոց: Հիմա էլ նրանց մեծադիր նկարները փակցնում է Երեւանի փողոցներում՝ իր գովազդային նկարների կողքին: Առաջ Հայաստան, Առաջ Սերժ: Առաջ, բայց ուր... դէպի խաղատներ, դէպի թալան, գողութիւն, սպանութիւն, դէպի արժանապատւութեան ոչնչացում:*

*Այս անարգանքին մասնակից են լինում հայ նորաթուխ աստղերը: Ասեմ ամօթ, շատ քիչ է: Ոնց էք ընտրութիւններից յետոյ մտնելու Ամերիկա եւ մեզ՝ հայերիս ասէք՝ մենք ձեզ սիրում ենք: Դուք ծախուած հոգիներով մարող աստղեր էք, որի համար ոչ թէ թանկ է ժողովուրդը, այլ փողի պսակը: Գոնէ օրինակ վերցրէք մեծ դիրիժոր Օհան Դուրեանից, որ աներեր կանգնած է մեծ երաժշտութեան եւ Առաջին նախագահի կողքին:*

*Ստորաքարշ երգիչները թող այսուհետ մոռանան Ամերիկայի ճանապարհը: Այստեղ ծախուող մարդկանց առաջ դուռը փակ է:*

# ԱՊԱԳԱՅԻ ԴՈՒՌԸ

*Հայաստանեան նախագահական ընտրութիւնների այս թոհուբոհում մարդիկ կան, որ կորցնում են իրենց դէմքը արժանապատւութիւնը: Դիմում են ամէն միջոցի սուտը ճշմարտութեան տեղ ներկայացնելու համար:*

*Միայն մի փաստ, այս օրերին եթերից անընդհատ հնչում է՝ մի ընտրէք անցեալը, ընտրէք ապագան: Ասողներից մէկն էլ տելեվիզոր բաժանող Տիգրան Կարապետեանն է իր թեթեւաբարոյ պահուածքով: Ուր էիր Տիգրան Ղարաբաղեան մարտի օրերին. Վոլգոգրադում առեւտուր էիր անում, որ յետոյ տուն գաս եւ հայրենասէր ձեւանաս:*

*Հենց քո գտնուած Ստալինգրադում պատերազմի տարիներին մարդիկ շատ միս էին ուտում, ցրտահարւում ու մահանում: Բայց չէին ընկրկում: Լաւ ծանօթ չես պատմութեանը: Պատերազմը զրկանքներ եւ աւերածութիւններ է բերում: Դրա գինը մեր յաղթանակն էր:*

*Ուրեմն Լեւոն Տէր-Պետրոսեանը յաղթանակած նախագահ է, ապագայի նախագահ: Լաւ գիտես, Հայաստանը առաջինը դուրս եկաւ Խորհրդային կազմից, առաջինը անկախութեան դրօշակ պարզեց:*

*Վեց դար յետոյ Լեւոնի ղեկավարութեամբ հայկական տարածքներ ազատագրուեցին: Այն երկրում, ուր հիմա ապրում ենք մեր այսօրուայ եւ ապագայի Հայրենիքն է, իսկ Լեւոնը անցեալը մերժած նոր Հայաստանի իրական դէմքը: Չշփոթենք երէկը այսօրի հետ: Լեւոնը նոր դուռ է բացել: Ապագայի դուռը:*

**«ԱՐԱՉ»**

*The Quality and Safe Choice for Your Child's High School Education*

AGBU HIGH SCHOOL – PASADENA

*OPEN ENROLLMENT FOR 2008-2009*

*Grades 9-12*

**The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.**

**Please call (626) 794-0363**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԱՆԿԵՂԾ ԽՕՍՔ ՀԱՅՐԵՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՍ

***ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ***

*Արժանավայել կեցուածքի, աննկուն կամքի, բախտորոշ պայքարի, խղճամիտ եւ ազատ ընտրութեան կոչն է դարձեալ:*

*Հայաստանի Հանրապետութեան նախագահը պիտի ընտրէք քանի մը օրէն՝ 19 Փետրուար 2008ին:*

*Գիտեմ, սիրելիներ, ձեզ համար բացառապէս տաժանելի ու փորձանաւոր յանձնառութիւն է ասիկա: Ի վերջոյ, գալիք տարիներն ու օրերը մեծապէս պիտի պայմանաւորուին ձեր ընտրութեամբ: Ճակատամարտի մը չափ վճռական պիտի ըլլայ այս ընտրութեան մէջ ձեր ցուցաբերելիք յստակատեսութիւնը, ողջմտութիւնը, իմաստութիւնը,*

*Եւ՝ քաջասրտութիւնը:*

*Ի վերջոյ, ի՞նչ կ՚արժէ ռազմադաշտի վրայ տարուած յաղթանակը, եթէ անոր հետեւի յաղթական երկրի ժողովուրդին սարկութիւնն ու կեղեքումը:*

*Երկար, երկա՜ր դարեր հայ ժողովուրդը հրաժեշտ տուած էր իր քաղաքական անկախութեան եւ հագիւ կը քաշկռտէր իր գոյութիւնը՝ օտար տիրապետութիւններու դաժան լուծին տակ: Այս լուծը մեզ ազգովին դարձուց հլու կամակատարը մեր վրայ գերիշխող բռնապետերուն: Եղան ընդվզումներ, ըմբոստութիւններ, ազատագրական պայքարներ: Եւ օր մըն ալ եղաւ աննախընթաց խոյանք, Սարտարապատի համազգային դիւցազնական ընդդիմութիւնը՝ երկրի երեսէն մեզ ջնջելու ելած օսմանեան հրէշին դէմ: Ու եղաւ արցախեան հերոսամարտ՝ անբասիր ազատամարտիկներու անբիծ արիւնով սրբագործուած:*

*Վերջապէս եղաւ անկախութիւն՝ դարերու օտար լուծէն ետք:*

*Ամէնքս ալ ականատես եղանք Հայաստանի Հանրապետութեան ցաւագին ծնունդին որ խառն զգացումներու եւ գնահատականներու առիթ տուաւ նոյն ատեն: Հայաստանի անկախութիւնը մեզի մատուցուեցաւ առանց մարտերու կամ արիւնահեղութեան, մինչ արցախեան ազատամարտը հայ ժողովուրդին պարտադրուեցաւ ազերի բռնագրաւիչներու կողմէ:*

*Որպէս ազգային ուրոյն միաւոր, դարերէ ի վեր մոռցած էինք անկախ ապրելու երանութիւնը: Մեր մտածողութեան եւ աշխարհայեացքին մէջ ա՛լ տեղ չունէր քաղաքականութեան խառնածին, բազմերես, բազմաբարդ եւ – ընդունինք կամ ոչ – բարոյականութենէ լուսատարիներով հեռու՝ միանգամայն կոշտ ու նրբին, լպրծո՛ւն արուեստը: Ասկէ՛ կը բխին մեր գործած ամենէն ազգավնաս, ամենալուրջ սխալները: Այո՛, շա՛տ սխալներ գործեցինք: Փոքր սխալներ, աւելի խոշոր սխալներ: Շա՜տ դանդաղօրէն սորվեցանք մեր սխալներէն: Բայց՝ սորվեցանք: Ու սորվելու գործընթացը, հրելովհրմշտկելով, կը շարունակուի մինչեւ այսօր՝ Հայաստանի անկախութեան տասնըվեցերորդ տարին:*

*Կարեւորն այն է որ չգործենք ճակատագրական սխալներ որոնք խնդրոյ առարկայ դարձնեն անկախ Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը, մեր ազգային գոյատեւումը:*

*Խօսինք անուններով:*

*Հայաստանի Հանրապետութեան առաջին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի օրով, եւ իր ու գինք շրջապատող ամբողջ վարչակազմի եւ անձնակազմի միասնական ջանքերով – կառավարութիւն, ազգային ժողով, բանակ եւ ազատամարտիկներ – ռազմական փայլուն յաղթանակ տարուեցաւ ազերի բանակին դէմ: Ասիկա, սակայն դեռ մինչեւ այսօր չէ ամրագրուած համապատասխան դաշնագրերով, այսինքն խաղաղութեան յաղթանակով: Դարձեալ իր օրով հիմը դրուեցաւ անկախ Հայաստանի պետական կառոյցներուն: Սակայն, իրեն յաջորդող Ռոպերթ Քոչարեանի տասը տարուայ իշխանութեան ընթացքին, ժողովրդավարութեան ընդլայնում ու զարգացում չարձանագրուեցաւ այդ կառոյցներուն մէջ – ընդհակառակը՝ առաւել չեշտուեցան անոնց հակաժողովրդական, բռնատիրական յոռի կողմերը: Նոյնպէս, քոչարեանական տասը տարիներուն խաղաղութեան ամրագրումի ոչ մէկ իրագործում մեր հարեւաններուն հետ՝ եթէ զանց ընենք լուսանկարումի ու կեղծ ժպիտներու առիթները:*

*Հայաստանի Հանրապետութեան հիմնադրումի առաջին օրերէն սկսեալ, իրենց աւատապետական կամ դրամատիրական դիրքերը ապահովեցին այն հարստապետերը որոնք «ազատ շուկայական» ներկայ հայրենի երկրի տնտեսական աւազակապետութեան գլխաւոր սիւներն են: Որպէս հասարակական հաստատութիւն եւ ամրախարիսխ գործընթաց, սակայն, Լեւոն Տէր-Պետրոսեանին յաջորդող Ռոպերթ Քոչարեանի տասը տարիներուն էր որ իրենց ներկայութիւնն ու հարստութիւնը բազմապատիկ ամրապնդեցին այս հարստապետերը: Իշխանութեան ամենավերին պատասխանատուներու մեղսակցութեամբ Կարէն Տեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի սպանութենէն ետք, որուն հեղինակները իրենց ոճիրի թափանցիկ թաքնուցմով դեռ կ՚անարգեն ձեր ուշիմութիւնը, առաւել եւս անբարտաւան դարձան այս հարստապետերը: Անոնք սկսան ընդլայնել իրենց ազդեցութեան ոլորտը եւ ուղղակիօրէն հակակշռեցին նաեւ կառավարական ու խորհրդարանական իշխանութեան համարեա բոլոր լծակները՝ Անդրանիկ Մարգարեանի եւ ապա Սերժ Սարգսեանի վարչապետութեան տակ կազմելով քոչարեանական արիւնոտ աւազակապետութիւնը:*

*Չմոռնանք թէ այս աւազակապետութեան յղացումն ու ծնունդը որեւէ առանձին անհատի չի պատկանիր: Անոր սերմերը արդէն ցանուած էին Հայաստանի անկախ պետականութեան հիմնադրումի առաջին օրէն իսկ: Այսինքն ա՛յն օրէն երբ, երկիրը իր մեծամասնութեամբ հապճեպ որդեգրեց «ազատ շուկայական» կոչեցեալ տնտեսական համակարգը՝ շուկան գրաւել սկսած ամենէն գիշատիչ տարրերու ալ գործօն դրդումով: Դրամատիրութեան անտառային վայրագ տեսակի շահագործման բոլոր յոռի կողմերու անիշխանական միախառնումով ծնունդ առած անճոռնի Արշակաւան մըն էր որդեգրուածը – առանց սակայն ունենալու այդ վայրագութիւնը գէթ որոշ չափով հակակշռելու կոչուած այն կառոյցները որոնք գոյութիւն ունին զարգացած դրամատիրական արդի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ:*

*Ահա այսպիսի քաոսի մէջ էր երկիրը երբ կողոպտուեցաւ «ճարպիկ», անխիղճ եւ անբարոյ չնչին փոքրամասնութեան մը կողմէ: Հանրապետութեան Նախագահի աթոռին վրայ բազմեցաւ Ռոպերթ Քոչարեանը, իր կողքին ունենալով վարչապետ Սերժ Սարգսեանը (այժմ՝ Նախագահցու) եւ մօտ քառասուն «հատընտիր» ընտանիքներ՝ անխնայ յափշտակիչները երկրի համայն հարստութեան: Այլ խօսքով, Ալի Պապան եւ իր քառասուն գողերը՝ ամբողջական կազմով:*

*Եւ քանի փոքր ու աղքատիկ է մեր օրերու Հայաստանը, ներքին թալանէն ետք մարդավայել ապրուստի միջոց չմնաց ձեզի՝ ժողովուրդին համար: Արցախեան պատերազմէ, երկրաշարժէ եւ շրջափակումէ քամուած պայմաններուն տակ, Տէր-Պետրոսեանի օրով յոյսը կա՛ր դեռ: Բայց քրէական «ընտրանիի» եւ հարստահարիչներու հովանաւոր Քոչարեանի եւ անոր նշանակեալ գահաժառանգ Սերժ Սարգսեանի արհեստավարժ կեղեքիչներու անխոնջ ջանքերուն շնորհիւ հիմա այլեւս յոյսի նշոյլն իսկ չկայ: Հիմա ոչ եւս է յոյսը: Զայն փոխարինողն է յուսալքումն ու վա՛խը – վախը՝ վաղուայ տնտեսական ու ֆիզիքական անապահովութեան:*

*Իմ սիրելի՛ հարազատներ,*

*Աւազակապետերու իշխանութիւնը, ձեզմէ կողոպտած գումարներու աննշան մէկ մասն օգտագործելով որպէս ընտրակաշառք, կ՚ուզէ կողոպտել ոչ միայն ձեր քուէները, այլ նաեւ – մանաւանդ – ձեր սիրելիներուն, բալիկներուն ու թոռներուն գալիք պայծառ օրերը:*

*Դառնութեան պահուն, մի՛ ծախէք ձեր ու մեր աննման հայրենիքի – ժողովուրդի՛ – անփոխարինելի անկախութիւնը՝ Սերժի ձեզմէ գողցած եւ ձեր արժանապատուութեան ու քուէին որպէս անարգ գին սահմանած երկու կտոր արծաթով:*

*Թոյլ մի՛ տաք որ ձեզ խաբեն այն ստայօդ պատճառաբանութեամբ թէ ընդդիմութեան ղեկավարութիւնը աւելի չ՚արժեր քան ներկայ իշխանութիւնը, եւ թէ ձեզ համար աւելի նպաստաւոր է կլլել արժանապատուութիւնը, գրպանել ձեր առջեւ նետուած մանրադրամը, քուէն տալ անարժաններուն՝ սուտի, կարճատես ընչաքաղցութեան ու վախի ճնշման տակ:*

*Ճիշտ է, քաղաքականութեան մէջ սուրբեր չկան, քանի սուրբն իսկ իր սրբութենէն բան մը կը կորսնցնէ երբ քաղաքական ասպարէզէն ներս մտնէ:*

*Սակայն նոյնքան ճիշդ է թէ քաղաքականութեան հետապնդած նպատակը կարելի՛ լաւն է եւ ո՛չ անկարելի լաւագոյնը որ անգոյ է իրական աշխարհի մէջ: Երբ ստոր ցեխարձակումներ կը կատարուին գործնապէս իրագործելի լաւին դէմ՝ այն պատրուակով թէ լաւագոյնէն պակաս է, այն ատեն ձեզ կը մղեն – կամ կը փորձեն գնել ձեզ – որ ընտրէք վատը: Վատն ընտրելով կը մտնէք փակուղի, այսինքն կը փակէք ձեր վիճակի բարելաւման ուղին: Միւս կողմէ, ընտրելով լաւը՝ դուք ճանապարհը կը հարթէք աւելի լաւ գալիքին եւ ձեր վիճակի աստիճանական մեթոտիկ բարելաւման:*

*Այս տրամաբանութեամբ է որ, եթէ Հայաստանի քաղաքացի ըլլայի, ես իմ քուէս անվարան պիտի տայի ընդդիմութեան միակ յուսալի նախագահական թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանին – մանաւանդ երբ այլընտրանքը քառասուն գողերու գլուխն անցած նոյն ինքը նոր Ալի Պապան՝ Սերժ Սարգսեանն է:*


ABA
A.B.A. INSURANCE SERVICES
Life, Health
Group Health
Disability
Long Term Care
Blue Cross of California
Blue Shield of California
1975-2008
33th
ANNIVERSARY

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ



818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՆՄԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Սահակ-Մեսրոպ Վարժարանի հոգաբարձութեան, տնօրէնութեան, ուսուցչակազմին, ծնողներուն, աշակերտներուն եւ համակիրներուն համար պատմական եւ ուրախալի օր մըն էր Յունուար 24, 2008-ն:*

*Աստուած պատասխանելով մեր*



Սահակ-Մեսրոպ Վարժարանի նոր համալիրի

*աղօթքներուն, Սահակ-Մեսրոպ Վարժարանը օժտուեցաւ 3.3 էյքըր տարածութեամբ նոր համալիրով մը Ալթատինայի շրջանին մէջ:*

*Դպրոցս մտադրած է վերոյիշեալ համալիրին բացումը կատարել 2008-2009-ի տարեշրջանին: Մանրամասնութիւնները շուտով պիտի հաղորդուին Փետրուար եւ Մարտ ամիսներուն:*

*Դպրոցիս առաքելութիւնն է հայ եւ մատղաշ սերունդին ջամբել, լաւագոյն ուսման կաճառը, ծանօթացնելով նաեւ հայ մշակոյթը եւ պատմութիւնը:*

*Սահակ-Մեսրոպ Վարժարանը ունի նաեւ Միջնակարգի եւ Երկրորդականի բաժիններ, որոնք վարկաւորուած են WASC-ի եւ ACSI-ի կողմէ:*

*Այժմ, դպրոցը ունի 385 թանկագին աշակերտներ, որոնք կ՚ընդգրկեն մանկամսուրէն մինչեւ ԺԲ. կարգ:*

*Դպրոցս ունի երկու դպրոցավայրեր. մէկը՝ Maiden Lane-ի վրայ, ուր կը յաճախեն նախամանկապարտէզէն մինչեւ Ե. կարգի փոքրիկներ, իսկ երկրորդ դպրոցավայրը՝ վարձուած է Sierra Madre-ի Nazarene եկեղեցւոյ կողմէ, ուր կը յաճախեն Զ.էն մինչեւ ԺԲ. կարգի աշակերտներ, որուն վարձքի ժամանակաշրջանը կ՚աւարտի Յունիս 2008-ին:*

*Սահակ Մեսրոպ Վարժարանը կը դիմագրաւէ նոր նախաքայլի մը սկիզբը, բայց Աստուծոյ ապաւինելով, ձեր յարատեւ աղօթքներուն շնորհիւ, եւ ձեր բարոյական եւ տնտեսական աջակցութեամբ, դպրոցս պատրաստ պիտի ըլլայ ծառայելու գաղութիս, շարունակելով հայթայթել լաւագոյն ուսումնական գիտելիքները, ապահով եւ Աստուածահաճոյ միջավայրի մէջ ի սէր մեր սիրելի փոքրիկներուն, որոնք վստահուած են մեզի:*

*Երբ գնման վաւերագրական թուղթերու աշխատանքները ամբողջանան, հոգաբարձութեան եւ տնօրէնութեան նպատակն է կատարել նոր համալիրի բացման հանդիսութիւնը, հրաւիրելով գաղութիս համակիր ընտանիքներն ու բարեկամները, գոհութեամբ տօնախմբելու այս ուրախ հանդրուանը:*

*Այս հրճուանքի օրը առիթ պիտի ընծայէ, որ Փասատինայի, Ալթատինայի եւ Սէն Կապրիէլի շրջանի ժողովուրդը մօտէն ծանօթանան շէնքին եւ տեղեկանան մեր ապագայ ծրագիրներուն մասին:*

*Այսպիսով իրենց զաւակները կրնան արձանագրել մանկամսուրէն մինչեւ երկրորդականի ԺԲ. դասարանները յառաջիկայ ուսումնական տարեշրջանի համար:*

*Բոլորս փառք կու տանք*

Շար.ը էջ 17

### Հ.Բ.Ը.Մ. ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ «ՁՈՒԱՐԹ»ԷՆ ԵՒ «ԼԷՊԼԷՊԻՃԻ»-ԷՆ ԵՏՔ

# «ՁԷՄԻՐԷ»Ն ԴՈՒՌԸ ԿԸ ԹԱԿԷ



*Հեքիաթի աշխարհը ընդհանուր գրաւչութիւն ունի, ան ժողովրդական է եւ սիրելի՝ թէ մանուկին եւ թէ չափահասին համար:*

*Հայ ժողովուրդը բախտաւոր է իր մեծ երգահան զաւակ Տիգրան Չուխաճեանով, որ 19րդ դարուն եկաւ կենդանացնելու հեքիաթի այս աշխարհը՝ վառ երեւակայութեամբ, զուարթ թատերատեսրերով եւ պայծառ երաժշտութեամբ: Դժբախտաբար սակայն, Չուխաճեանի երաժշտական ժառանգութիւնը, եւ անոր հսկայ նպաստը հայ երաժշտութեան եւ մշակոյթի պատմութեան հոլովոյթին մէջ, անտեսուած մնացին երկար տարիներ:*

*Հ.Բ.Ը. Միութեան Արտաւազդ Թատերախումբը եւ Լարք Երաժշտական Ընկերակցութիւնը անգամ մը եւս միացեալ ուժերով կու գան վերազարթնեցնելու ժողովրդային գիտակցութիւնը այս հսկայ երգահանին եւ իր գործին նկատմամբ:*

*Չուխաճեանի երկու երգախաղերը, «Չուարթ»ը եւ «Լէպլէպիճի Հօր-Հօր Աղա»ն արդէն ամբողջական հայերէն արտադրութեամբ ներկայացուեցան Հարաւային Գալիֆորնիոյ հասարակութեան՝ Հ.Բ.Ը. Միութեան եւ Լարքի օրինակելի գործակցութեամբ եւ վիթխարի ջանքերով:*

*Երրորդ ներկայացումը կու գայ վերարտադրելու երգախաղ մը որ երբեք չէ հրապարակուած եւ չէ կրկնուած իր անդրանիկ ներկայացումներէն ի վեր Պոլսոյ մէջ (1891 եւ 1893 թուականներուն):*

*Ուստի մեծ հաճոյքով եւ հպարտութեամբ կու գանք յայտարարելու՝ Տիգրան Չուխաճեանի երգախաղերէն «Ձէմիրէ»ի ներկայ ժամանակներու համաշխարհային անդրանիկ արտադրութիւնը՝ բոլորովին նոր հայերէն թարգմանութեամբ:*

*Վաչէ Պարսումեանի եւ Գրիգոր Սաթամեանի միաձոյլ տեսիլքին որպէս արդիւնք եւ տաղանդի արգասիք՝ «Ձէմիրէ»ն արդէն յա-*

Շար.ը էջ 17


SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL

# OPEN HOUSES

FOR 2008-2009 SCHOOL YEAR

PRE-SCHOOL & KINDERGARTEN

Tuesday, March 11, 2008 at 7:00PM

JR. HIGH, MIDDLE & HIGH SCHOOL

Wednesday, March 12, 2008 at 7:00PM

ELEMENTARY SCHOOL 1st – 5th Grades

Thursday, March 13, 2008 at 7:00PM

***2501 N. Maiden Lane, Altadena, CA 91001 - (626) 798-5020***

- Serving **the community** for 29 years
- Accredited by Western Association of Schools & Colleges (WASC) and by Association of Christian Schools International (ACSI)
- New and beautiful 3.3 acre school campus
- Curriculum:
*Յայտագրի ընթացքին ցուցադրուած Գիւմրիի թիւ 28 նախակրթարանին կատարուած օժանդակութիւնը, կու տար վկայութիւնը Նոր Տարուայ հրաւէրին,, «գութ ու բարութիւն ցրելու» ովկիանոսներէն անդին... Մայր Հայրենիքի Գիւմրիի ընչազուրկ երախաներուն:*

*Այսպէս կը խլուէին յաղթանակները բարութեան:*

*Ու այդ երեկոյ հանդիսատես ժողովուրդը Նոր Տարուայ դոյլը լեցնելով բարութեամբ... իր սէրն ու գնահատանքը յայտնեց «Հրեշտակներու Բարեկամներ» բոլորին ծանօթ՝ Սեդա Մորաքրոջ, որ ոչինչ խնայեց «գութ ու բարութիւն ցրելու» Գիւմրիի իր կարմիր շուշաններուն:*

*Վարձքը կատար բոլոր նուիրեալներուն:*



**www.massisweekly.com updated every Friday**

# ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԸ 2007-Ի ԸՆԹԱՑՔԻՆ $56 ՄԻԼԻՈՆ ՆՊԱՍՏ ՀԱՅԹԱՅԹԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*2007-ի ընթացքին Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստանին հայթայթած է $56 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ՝ մեծաւ մասամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, ըստ կազմակերպութեան ելեւմտական վերջին քննարկման: Տրամադրուած նպաստը կը ներկայացնէ գրեթէ կրկնակի աճ մը նախորդ տարուայ շուրջ:*

*Ելեւմտական քննարկումը ցոյց կու տայ նաեւ թէ Միացեալ Հայկական Ֆոնտը իր եկամուտին նուազ քան 1 տոկոսը տրամադրած է վարչական ծախսերու, մնացեալ 99 տոկոսը յատկացնելով Հայաստանի ու Արցախի ժողովուրդի օժանդակութեան:*

*Անցեալ 18 տարիներու իր գործունէութեամբ, Միացեալ Հայկական Ֆոնտը Հայաստան փոխադրած է $502 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն՝ 144 թռիչքներով եւ 1,494 ծովային արկղերով:*

*Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեա, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:*

*Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:*

## ԹԵՐԹԵՐԻ ԹԵՐԹ՝ 28-ԱՄԵԱՅ «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՅԱՐԳԱՐԺԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ

*Այս հակիրճ նամակովս կը շնորհաւորեմ համայնքին հայեցի ու նուիրական շաբաթաթերթին, ձեր ու մեր «Մասիս»ին իր լուսաւոր տարեդարձի առթիւ: Կուսակցական օրգան լինելով հանդերձ՝ այն մնում է ընթերցուող, հոգու հետ զրուցող պարբերական, քանզի կուրօրէն կուսակցականացուածչէ, ուստի պիտի որ վայելի եւ յարգանք, եւ համակրանք:*

*Միով բանիւ, շնորհաւորում եմ նաեւ բոլորիդ, որ պայքարում էք գրաւոր հայերէնի պահպանման խրամատներում: Ազգային փառք ու պատիւ ձեզ:*

*Վերոյիշեալ անաչառ, բարի եւ ազգօգուտ մաղթանքներով՝ ձեր*

**ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ**

**Հայ Թելեժամը Կը Վերադառնայ**
**18ը Ալիքի Վրայ**
**Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ, այլ Օրուան 24 ժամերը**
**Շաբաթը 7 օր անվճար**
**Հարկ չկայ բաժանորդագրուելու – 40 Յաւելեալ ալիքներ**

**Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ**
**(818) 982-2400**




Թէքէեան Մշակութային Միութեան
Լոս Անճելըսի Մասնաճիւղ

**ՅԱԿՈԲ ՊՈՂՈՍԵԱՆԻ**
**«ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ»**

**Գիրքի Ներկայացում**

Ելոյթ կ՚ունենան՝
**ՓՐՈՖ. ՕՇԻՆ ՔԷՇԻՇԵԱՆ** *(Գիրքի մեկնաբանութիւն)*
**ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ** *(Խմբագրի խօսքը)*

**Վկայութիւններ**
*Գեղարուեստական բաժին*
**ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ**
**ԱՆԱՀԻՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ**
**ԼԵՒՈՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**

Հանդիսավար՝ **ԲԱՐՍԵՂ ԳԱՐԹԱԼԵԱՆ**

**Կիրակի, Փետրուար 24, 2008 – Կ.Ե. 6:00**
Կլենտէյլի Կեդրոնական Գրադարան
222 E. Harvard, Glendale

**ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» (ԺԳ ԴԱՐ)

## Մուտք

*Կիրակոս Վարդապետ Գանձակեցիի «Պատմութիւն Հայոց» երկը 13րդ դարուն գրուած անգուգական գործ մըն է իր ժամանակաշրջանի հայոց եւ միջազգային իրադարձութեանց վերաբերեալ, ընդարձակ, մանրամասն եւ ստուգապատում: Գործին տիտղոսանունը աւելի երկար է, նշելով պատմագրութեան շրջանը, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ իր օրերը, ներառնելով նաեւ իր՝ Կիրակոսի անունն ու Գետիկ Վանքի իր պատկանելիութիւնը: Սոյն աշխատանքը լիովին սերտած ու քննական հրատարակութեամբ ի լոյս ընծայած է Կարէն Մելիք-Օհանջանեան 1961 թուին Երեւանի Ակադեմական հրատարակչութենէն:*

## Հեղինակը

*Գանձակեցիի երկը մեզի հասած է 40-է աւելի ձեռագիր օրինակներով որ ինքնին ցոյց կուտայ գործին մեծ կարեւորութիւնն ու օգտակարութիւնը սերունդէ սերունդ: Անոնցմէ 28 օրինակներ ի պահ դրուած են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ: Անկասկած հեղինակին անունը եղած է Կիրակոս Գանձակեցի, ծնած Գանձակ քաղաքին մէջ 1200 կամ 1202 թուականներուն: Եղած է ուսեալ վարդապետներէն մին Գետիկ Վանքին, եւ բանասէրներ զինք նոյնացուցած են Կիրակոս Երզնկացիի եւ Կիրակոս Արեւելցիի հետ, յենլով «Յայսմաւուրք» մատեանի մէկ յիշատակարանին վրայ՝ ընդօրինակուած իր կողմէ 1269 թուականին:*

*Յիշեալ յիշատակարանը զինք Արեւելցի եւ ոչ թէ Գանձակեցի կը կոչէ տալով նաեւ իր ծննդեան ճիշդ թուականը: Բանասէրներ եզրակացուցած են թէ Կիրակոս պատմիչ երեք ազգանուններով նոյն անձնաւորութիւնը եղած է՝ Գանձակեցի, Երզնկացի, Արեւելցի:*

*Կիրակոս եղած է այն քիչերէն որ հետաքրքրական ինքնակենսագրութիւն մըն ալ հասցուցած է մեզի: Շատ կապուած ըլլալով իր ուսումնական կեդրոնին՝ Գետիկ Վանքին, աշակերտած է եւ հիացած նշանաւոր Վանական Վարդապետին, որ մեծ ուսուցիչներէն եղած է Գետիկ Վանքին, որուն շուքին տակ Կիրակոս ուսած է «երկար տարիներ», ինչպէս ինք կ'ըսէ: Վանական Վարդապետ Գետիկ Վանքէն ետք հաստատած է Խորանաշատ Վանքը 1220 թուականին, ուր Գանձակեցի եւս աշակերտեցաւ իրեն՝ մինչեւ 1225: Վանական Վարդապետ մեռած է 1251 թուականին: Սակայն Մոնկոլներ երբ Հայաստան արշաւեցին, կործանեցին Խորանաշատը, ու Կիրակոս գերի տարուեցաւ 1236 թուին, բանտարկուեցաւ, եւ սակայն նոյն տարին ազատ արձակուեցաւ, նոյնիսկ օգտակար հանդիսանալով Մոնկոլներուն որպէս թարգման իր գիտցած երկու լեզուներուն շնորհիւ՝ թրքերէնի եւ պարսկերէնի:*

## Դիւանագիտական Յարաբերութիւններ

*Կիրակոս՝ «Արեւելցի» անունը կրեց քանի որ Կիլիկիոյ լատինադաւան արեւմուտքի հակառակորդ խումբին կը պատկանէր՝ Արեւելեան Վարդապետներուն հետ: Իր կողմնորոշումը կուգար իր սիրեցեալ ուսուցիչ Վանական Վարդապետէն եւ դասակից Վարդան Արեւելցի Վարդապետէն, որոնք Գանձակեցիի բառերով «վարդա-պետական եւ դաւանական հեղինակութիւններ» էին: Հոն՝ դէպի Արեւելք էր ուղղուած հեղինակութեան ղեկը հայ եկեղեցւոյ դաւանութեան նկատմամբ:*

*Կիրակոս անձնական հանդիպում մը ունեցած է Կիլիկիոյ Հեթում Թագաւորին հետ 1225 թուին երբ Թագաւորը Մոնկոլիոյ մայրաքաղաք Սամարղանդէն կը վերադառնար, եւ ճամբու ընթացքին կը հանդիպէր Կիրակոսի Հայաստանի Արագածոտն նահանգի Վարդենիս գիւղին մէջ, ուրմէ Գանձակեցին կը լսէր «իր տեսած բարբարոս ցեղի՝ Մոնկոլներու մասին»: Հեթում գացեր էր հաշտութիւն մը կնքելու, ազատելու համար իր երկիրը Մոնկոլեան արշաւանքներէն: Իր եղբայրը Սմբատ Գունտըսդապլը նախ պաշտօնապէս ուղարկած էր Գարագորում 1248 թուին, ուրմէ հինգ տարի ետք 1253-ին Հեթում անձամբ գացած էր տեսակցելու Մոնկոլ Մանկու Խանին հետ: Այս բոլորի մասին կը կարդանք Կիրակոսի գիրքէն:*

*Կիրակոս Սիս կը գտնուէր վերոյիշեալ «Յայսմաւուրք» մատեանի գրութեան տարին, 1269-ին, զոր ինք գրեց ու աւարտեց: Իր մահուան թուականը կը ճշդէ Գրիգոր Ականց, երբ կ'ըսէ. «Հայոց 720 թուականին (Քրիստոսի 1271 թ.) իրենց հանգիստը մտան հայոց զոյգ բազմերախտ վարդապետները Վարդան եւ Կիրակոս»: Կիրակոս Գանձակեցի ծնած էր 1200 թուին եւ մահացած 1271 թուին:*

## Բովանդակութիւնը

*Կիրակոս Գանձակեցի իր «Պատմութիւն» գործին ձեռնարկեց 1241 թուի Մայիս 19-ին, Հոգեգալստեան Կիրակի օրը, ինչպէս ինք կը նշէ: Աշխատած է անոր վրայ քսան տարիներ ու վերջացուցած զայն: Երկին Ա մասը թէեւ նախորդ պատմիչներու գրածներէն քաղուած է, Բ մասը շատ աւելի հետաքրքրական, արժէքաւոր եւ այժմէական նիւթեր կը բովանդակէ «ականատես»ի վկայութիւններով ու փորձառութեամբ ճոխացած: Գործը աւարտած է 1265 թուի Մոնկոլ Ապաղու Խանի եւ Բիւզանդիոնի Միքայէլ 8-րդի դստեր Դեսբոնիայի ամուսնութեամբ: Գիրքի եզրափակման մասին կը վկայէ իր դասակիցը՝ Վարդան Վարդապետ Արեւելցի, յայտնելով թէ «Նոյն 1265 տարին Վանական Վարդապետն ու Կիրակոս գրեցին Մոնկոլներու, պարսից, աղուաններու, հայոց, վրացիներու եւ յոյներու մասին»:*

*Կիրակոսի երկը ունի յատկանշական առաւելութիւն մը եւս: Ան օգտագործած է Գետիկ Վանքի եւ այլ հնութեանց պատերուն վրայ փորագրուած արձանագրութիւնները: Երբ գրած է Մխիթար Գօշի եւ Գետիկ Վանքի մասին, արտագրած է նման փորագրուած տեղեկութիւններ վանքի շինարարութեան, շինարարներու եւ բարերարներու մասին: Անտարակոյս Գանձակեցի իր յաջորդ սերունդներու պատմիչներուն կողմէ ընտիր ու վստահելի պատմիչ մը նկատուած է, յատկապէս Մոնկոլներու ի Հայաստան կատարած աւերիչ արշաւանքներու մասին:*

*Գանձակեցիի գործին զուգահեռ կ'ընթանայ պարսկերէն գրուած ժամանակակից պատմագրութիւն մը՝ գրուած Րաշիտ Ալ-Տինի կողմէ (1247-1318), որ կը բովանդակէ լայն տեղեկութիւններ Մոնկոլներու պատմութեան, ինչպէս նաեւ Հնդկաստանի եւ Եւրոպիոյ մասին: Այս գիրքը որ կը կոչուի «Ճամիլ Ալ-Թաուարիխ» (Պատմութիւններու Հաւաքածոյ), կուգայ լրացնելու Կիրակոսի գիրքին անաւարտ մնացած մասը: Նոյնը կարելի է ըսել նաեւ Վարդան Արեւելցիի, Կիրակոսի դասակիցին գրած «Պատմութիւն»ը որ եզրափակիչ մասը կարելի է նկատել Կիրակոսի գործին:*

*Կարեւոր է նշել նաեւ որ Գանձակեցիի գործի վերջաւորութեան հայ եկեղեցւոյ վարդապետութեան վերաբերեալ բաժին մըն ալ կայ, ուր Ներսէս Շնորհալի Հայրապետի Հաւատոյ Հանգանակը լրիւ արձանագրուած է: Բնագիրը հարազատ է եւ նոյնը ինչ որ իր «Ընդհանրական Թուղթ»ին մէջ կը կարդանք: Կիրակոս ընդգրկած է նաեւ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267) կոնդակը Սիսի եկեղեցական ժողովի մասին որ գումարուեցաւ 1243 թուականին, ուր նաեւ 24 որոշումներ առնուեցան որոնք լրիւ կան այս երկին մէջ: Կիրակոս ունի նաեւ Սուրբ Հոգւոյ Բխման վարդապետութեան ուղղադաւան բանաձեւը, որ է «բխումն ի Հօրէ», որուն համար ալ ինք կ'աւելցնէ, ըսելով թէ «այդ Հայ Եկեղեցւոյ կողմէ եւ Կիրակոսին կողմէ ընդունելի է, այսինքն Ս. Հոգւոյ բխումն ի Հօրէ, եւ յայտնուած Որդւոյն կողմէ»:*

## Կիրակոս եւ Վարդան

*Վարդան Արեւելցի գրած է իր կարեւոր երկը յայտնելով որ օգտագործած է Կիրակոսի «Պատ-մութիւն»ը յատկապէս աղուաններու, պարսիկներու, հայերու եւ յոյներու մասին գրած ատեն: Վարդան Աղուանից ազգը կը կոչէ «Ազգին նետողաց», այսինքն նետ քաշող ժողովուրդ: Կ'ըսէ նաեւ թէ օգտագործած է Վանական Վարդապետի գրածները նոյն ազգերու մասին թէ՝ «անոնք որոնք մանրամասնօրէն գրուած էին երանելի զոյգ վարդապետներուն Վանականի եւ մեր սրտակից եղբօր Կիրակոսի կողմէ, զորս չհամարձակեցանք գրել վերստին երրորդ անգամն ըլլալով, բայց միայն համառօտիւ կարեւոր նիւթերը արձանագրելով»:*

*Թէեւ Վարդան օգտուած է Կիրակոսէն, ինչպէս Մելիք-Օհանջանեան նկատած է, երբեմն նորութիւններ եւս գտնուած են Վարդանի մօտ, որով յայտնի կ'ըլլայ տարբեր աղբիւրներու օգտագործումը Վարդանի եւ Կիրակոսի կողմէ անկախաբար իրարմէ: Նոյնիսկ, ըստ Մելիք-Օհանջանեանի, թերեւս Վանական Վարդապետի կորսուած գործն է որ տեսած ըլլար Վարդան ու գործածած զայն: Գանձակեցիի անաւարտ մնացած մասը կը վերաբերի Մոնկոլ Ապաղու Խանի (1257-1267) արշաւանքի մասին դէպի Դարպանդ, Կուր գետի ափին, որուն դիմացի ափը դիրք գրաւած էր Ապաղուի բանակը:*




Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance *by BC Life & Health Insurance Company*
- HSA-Compatible Plans *by BC Life & Health Insurance Company*
- Integrated Workers' Compensation *by Employers Compensation Insurance Company*

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.℠

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՆՇՈՒՄԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

*ԱԻԴԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ*
*(ԱՒՍՏՐԱԼԻԱ)*

... Գրեթէ երկու ամիս, մեր թերթի »Գրաւուած թուականներ« բաժնին մէջ, ընթերցողներու ուշադրութեան կը յանձնէինք, թէ Դեկտեմբեր 1ին տեղի պիտի ունենայ յոբելինական երեկոյ՝ նուիրուած յայտնի կոմպոզիտոր, դիրիժոր, գրող եւ հասարակական գործիչ Հենրիկ Անասեանի ծննդեան 70 եւ ստեղծագործական-կատարողական գործունէութեան 50-ամեակը:

Հանգամանքներու բերումով երեկոն տեղի չունեցաւ եւ յետաձգուեցաւ ալ աւելի յարմար թուականի մը համար:

Թերթի բազմաթիւ ընթերցողներու հետաքրքրութեանը յագուրդ տալու համար, դիմեցինք Պրն. Անասեանին.

- Մաեստրօ, կրնա՞ք քանի մը բառերով ըսել, թէ ինչո՞ւ տեղի չունեցաւ ձեր յոբելինական երեկոն:

- Կրնամ, եւ ալ ալ ոչ թէ իմ բառերովս, այլ Գաբրիէլ Սունդուկեանին բառերով, որ կ՚ըսէ. »Գելի վիզը ընդուր ա հաստ, որ իր գործերն՝ իրա ձեռով ա անում...«:

- Կարծում եմ, որ Երեւանում, Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան կողմից կազմակերպուած իմ յոբելինական երեկոն շատ աւելի յիշարժան է, քան կարող էր լինել այստեղ: Այնպէս որ, քո թերթի ընթերցողներն ու իմ արուեստը գնահատողները, կարծում եմ, փոքրիշատէ տպաւորութիւն ստացան դիտելով շնորհալի ասմունքող, հաղորդավարուհի Նունէ Աւետիսեանի »Բարեւ« յայտագիրը, որի ընթացքում 4 օր շարունակաբար սփռուեց իմ յոբելինական երեկոյի տեսագրութիւնը:

- Ընթերցողներին եւ հեռուստադիտողներին յաւելեալ տեղեկութիւններ տալու համար, ես դիմեցի Սիտնէյում բնակուող հիանալի երգչուհի Աիդա Աւետիսեանին, որը որպէս համերգի մենակատար, յանձն առաւ նկարագրել իր տպաւորութիւնները՝ իմ յոբելինական երեկոյից:

ԽՄԲ.

*- Զանգ Լոս Անճելոսից, այն էլ՝ կէսգիշերին.*

*- Աիդա ջա՛ն, քեզ ենք նայում Երեւանից, Անասեանի յոբելինական երեկոյին ես երգում, Նունէի «Բարեւ» ծրագրի մէջ են քեզ ցոյց տալիս: Այդ ինչ լա՜ւ ես երգում աղջիկս...*

*... Իմ մտքով երբեք չի անցել, որ ինչ որ մի օր, կարող եմ ելոյթ ունենալ Երեւանի ամենահեղինակաւոր սրահում՝ Արամ Խաչատուրեանի անուան համերգային մեծ դահլիճում, այն էլ մեր մաեստրոյի՝ Հենրիկ Անասեանի շնորհիւ:*

*Դեռ մաեստրոյին չհանդիպած, Օպերային Թատրոնի՝ բոլորին յայտնի, տարբեր ձեռնարկների յայտարարութիւններով լի հսկայ ցանկապատից վեր, առանձին մի տեղում փայլում է Հենրիկ Անասեանի յոբելինական երեկոն աւետող մեծածաւալ պաստառը:*

*- Եւ ի՞նչ, - երեկոյի գեղարուեստական յայտագրին մասնակցող արուեստագէտների մէջ է նաեւ իմ անունը: Միւս մենակատարներն են՝ Մարիետա Անասեան, Լէյլա Սարիբէկեան, Աննա Մայիլեան, Համլետ Գէորգեան եւ Արսէն Գրիգորեան:*

*Եւ, ամենագրաւիչն այն էր, որ երեկոյին մասնակցում էր նաեւ երեք տարի առաջ հիմնադրուած Հայաստանի ազգային նուագարանների նուագախումբը՝ Նորայր Դաւթեանի ղեկավարութեամբ:*

*Ես լաւ գիտեմ, թէ ինչպէս կոմպոզիտոր Արա Գէորգեանը որքան ջանք թափեց ինքնուրոյն, առանց վարձատրութեան աշխատող 40 շնորհալի երաժիշտներից կազմուած այդ հիանալի խմբին կառավարական հանագամանք ձեռք բերելու համար: Եւ, վաղամեռիկ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, ի պատիւ իրեն, կարծում եմ, ապահովեց ժողովրդական եւ քաղաքային երաժշտութեան յարատեւ ընթացքը մեր երաժշտական աշխարհից ներս:*

*Իսկական հայ երաժշտութեան վերոնշեալ մենակատարները սիրայօժար յանձն էին առել կատարել կոմպոզիտոր Հենրիկ Անասեանի երգերը՝ նրա յոբելինական երեկոյին:*

*Եւ՝ ամենակարեւորը.*

*Որքան որ ինձ յայտնի էր, Անասեանի երգերը կատարուելու էին սիմֆոնիկ նուագախմբի ընկերակցութեամբ, մանաւանդ որ նա այդ երգերը նախապէս գործիքաւորել էր սիմֆոնիկ նուագախմբի համար, ի՞նչ էր պատահել, որ նա հրաժարուել էր այդ մտքից եւ նոր գործ ստեղծել իր համար.*

*- Ես անցեալ տարի լսել էի Նորայր Դաւթեանի (որ, որպէս քամանչահար նախկինում նուագել էր իմ ղեկավարութեան ներքոյ) նորաստեղծ այդ նուագախմբի կատարումները, -ասում է Հենրիկ Անասեանը, - եւ լաւ տպաւորութիւն էի ստացել, խոստացել էին ղեկավարին եւ, իսկապէս շնորհալի երաժիշտներին, իմ գործերով համալրել իրենց յայտագիրը:*

*- Եւ ահա, եկել էր յարմար առիթը՝ այդ նուագախմբին օգտագործելու իմ յոբելինական երեկոյին, սակայն, պիտի խոստովանեմ, որ իմ այդ մտայղացման իրականացումը շատ թանկ նստեց ինձ վրայ: Ես ստիպուած եղայ տասներկու գործերի յարմար նոր մշակում եւ գործիքաւորում անել, գործեր, որոնք նախապէս մշակուել էին սիմֆոնիկ նուագախմբի համար:*

*Ես, իհարկէ գիտէի, որ Անասեանը գիշերը ցերեկին խառնած, երեք ամիս շարունակ, համակարգչի օգնութեամբ, աշխատում էր հասցնել յայտագիրը: Նուագախմբի անդամները, անհամբեր սպասում էին իրենց համար ստեղծուելիք նոր յայտագրի երեւան գալուն:*

*Եւ, տեսնել էր պէտք նրանց ոգեւորութիւնը՝ Հենրիկ Անասեանի երգերի կատարման ժամանակ: Իրենց համար մի նոր աշխարհ էր բացուել: Նուագախումբը հնչում էր սիմֆոնիկ նուագախմբի նման: Ամէն մի կատարող, լարուած հետեւում էր դիրիժորի ցուցմունքներին: Ինչպէս ասում են՝ «բան կար նուագելու» եւ ոչ թէ «դամ պահելու»: Ամէն մի գործիք հնչում էր իր ձայնածաւալի լաւագոյն, ընտրովի հատուածներում:*

*- Ես մշտապէս ձգտել եմ, - ասում է Հենրիկ Անասեանը, - բարձրացնել հայկական ժողովրդական գործիքների վարկը երաժշտական կատարողական աշխարհում: Դա է պատճառը, որ իմ գործիքաւորման քուրայում կերտւում է մի համաձուլուածք, որի ամէն մի բաղադրատարր, հաւասար իրաւունքով է հանդէս գալիս, մեր մայր հայրենիքում:*

*Աննա Մայիլեան, - որ հոգեւոր երգերի անգուգական փոքրաթիւ երգչուհիներից մէկն է, Լէյլա Սարիբէկեան, - որն իր սքանչելի երգով հազարաւոր մարդկանց «պարել տուեց» Արագածի ստորոտին, Համլետ Գէորգեան, - որը բոլորովին նոր շունչ բերեց մեր ժողովրդական եւ գուսանական երաժշտութեանը, տասը տարի առաջ Հալէպից Հայաստան ներգաղթած Արսէն Գրիգորեանը, - որն ամէն ինչ անում է մեր աւանդական երգն ու պարը նորովի հրամցնել մեր հասարակութեանը, արտերկրից հայրենիք ժամանած բնածին երեւանցի, երգչուհի Մարիետա Անասեանը, - որ երեսուն տարի շարունակ բարձր է պահել հայ քաղաքային եւ հոգեւոր երգերի դրօշը օտար ափերում:*

*Վստահօրէն կարող եմ ասել, որ եթէ երեկոն յոբելինական չլինէր, այլ պարզ մի սովորական համերգ, ապա համերգային բաժնի բազմաթիւ երգեր կը կրկնուէին: Հազար երեք հարիւր հանդիսականներ, ըստ որում, եթէ կարելի է ասել, ընտրովի հասարակութիւն, գիտէր թէ ինչու եւ ինչի համար է եկել:*

*Երաժշտական ամէն մի ելոյթից յետոյ, դահլիճը ցնծում էր ծափահարութիւններից, եւ միայն երեկոն վարող տաղանդաւոր դերասան Ազատ Գասպարեանին էր յաջողւում կատակախառն միջամտութիւններով հանդարտեցնել հասարակութեանը:*

*Կոմպոզիտոր Հենրիկ Անասեանը քնարական երգերի հեղինակ է: Ճիշդ է, որ նա գրել է նաեւ բազմաթիւ մեծածաւալ ստեղծագործութիւններ, բայց ամենահրապուրիչը նրա երգարուեստն է: Հենց միայն երգերի անուանումները խօսում են նրա սիրոյ, աշխարհին, հայրենիքին, մարդկանց ու բնութեանը մշտապէս սիրահարուած լինելու մասին:*

*Ահա դրանցից մի քանիսի անուանումները, երգեր, որոնք կատարուեցին նրա յոբելինական երեկոյին:*

*«Սէրն է գալիս» (խօսք՝ Հենրիկ Անասեան), - առաջին կատարում, մենակատար՝ Լէյլա Սարիբէկեան:*

*«Սիրում եմ» (խօսք՝ Աւետիս Իսահակեան), մենակատար՝ Իդա Աւետիսեան:*

*«Նորից էկան էն հաւքեր» (խօսք՝ Յովհաննէս Թումանեան), մենակատար՝ Աննա Մայիլեան:*

*«Հին կարօտ» (խօսք՝ Պարոյր Սեւակ), - առաջին կատարում, մենակատար՝ Համլետ Գէորգեան:*

*«Երազ սէր» (խօսք՝ Հենրիկ Անասեան), մենակատար՝ Արսէն Գրիգորեան:*

*Ինձ բաժին էր ընկել «Սէրս քամեմ հոգուդ մէջ» եւ Պ. Սեւակի խօսքերով գրուած «Քո պատճառով» երգերը: Եւ, պիտի խոստովանեմ որ մաեստրոն միայն առաջին երգն էր ընդգրկել յայտագրի մէջ, սակայն չափազանց գոհ լինելով իմ կատարումից, երեկոյից մի քանի օր առաջ առաջարկեց երգեր նաեւ երկրորդ երգը:*

*Երեկոյի գեղարուեստական բաժնի մէջ առաջին անգամ կատարուեցին նաեւ Հենրիկ Անասեա-*

*Շար.ը էջ 18*

Հայկական եւ Արաբական
Պարի Դասընթացքներ



Տեղի պիտի ունենան ամէն Շաբաթ
կէսօրէ առաջ ժամը 11:30էն
մինչեւ կէսօրէ ետք ժամը 1:00

Ղեկավարութեամբ Պարաւոյց՝
Օր. Ալին Պօղարեան

Անոնք որ հետաքրքրուած են եւ կ՚ուզեն մաս կազմել
կրնան անձամբ ներկայանալ ամէն Շաբաթ օրերը,
կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ (626) 398-0506
Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena

# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐԷՆ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԵՐ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵՆ ՋԱՒԱԽՔԻ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱԿԱՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

*ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ*



*1900 թուականներէն սկսեալ Ջաւախքի հայութիւնը ենթարկուած ըլլալով թուրք գիւղապետներուն ճնշումներուն եւ կեղեքումներուն, Հնչակեան կուսակցութեան Մաշատի Ակոբի ֆետայական խումբը այդ շրջանի լեռներուն վրայ կը կատարէր հայապաշտպանման հսկողութիւն, պաշտպանելով հայերը եւ անոնց ինչքերը:*

*Այս մասին լայն վկայութիւններ կու տայ Թիֆլիսի մէջ հրատարակուող ՄՇԱԿ թերթը:*

*Այնտեղ, յատկապէս կը յիշատակուի շատ մեծ կարեւորութիւն ունեցող դէպք մը, եւ այդ առիթով տեղի ունեցած կառավարական հակազդեցութիւնն ու թշնամական վերաբերմունքը հայկական գիւղերու անմեղ բնակչութեան դէմ:*

*Կը ներկայացուի կատարուած ահաբեկումը եւ Ախալքալաքի գաւառապետի անընդունելի պատիժը, շրջանի չորս հայաբնակ գիւղերու դէմ:*

*Այսպէս կը գրէ ՄՇԱԿ թերթը «Գաւառի հարուստ բէկերից մէկը, Բորչալվեցի երեք բէկերի հետ միասին Ախալքալաք քաղաքից Սադամօ վերադառնալիս, ճանապարհին, Գանձա, Հեշտիա, Մեծ եւ Փոքր Արագեալ, Սաթգիւղերի միջեւ ընկած տարածքում յարձակման էր ենթարկուել Մաշատի Ակոբի գլաւորած հնչակեան հինգ հոգուց բաղկացած խմբի կողմից եւ սպանուել... Զնայած թերթում հասկնալի պատճառներով յարձակումը բնորոշւում է աւազակային եւ յարձակող խումբը աւազակախումբ, սակայն բոլորովին էլ այդպէս չէր»: Վկայութիւնները, որոնք լոյս տեսած են Վահան Տէրեանի մասին պատրաստած Սուքիասեանի կենսագրականին մէջ կու տայ յաւելեալ տեղեկութիւններ:*

*Այս դէպքը բաւական տեղական եւ վրացա-թրքական շրջանակներու մէջ մեծ աղմուկ եւ էթնիկ տագնապներ կը ստեղծէ: Այս թուրք Ասլան բէկի գերդաստանը եւ անոնց ենթակայ գիւղացիներէն քառասուն հեծեալներ ճամբայ կ'ելլեն դէպի պատահարի վայրը: Անոնց կ'ընկերակցի նաեւ ոստիկանապետը եւ քննութիւններ առաջ կը տարուին: Ձերբակալութիւններ կը կատարուին, իբրեւ կասկածելիներ: Դէպքին մեծ կարեւորութիւն տալով գաւառապետը կը ջանայ գոհացնել թուրք զանգուածը, եղածը համարելով ժողովուրդին կողմէ եղած ըմբոստութիւն:*

*Այսպիսի ըմբոստութիւններ հայերու կողմէ յաճախ եղած են բէկերուն խստացուցած ճնշումներուն դէմ:*

*Վահան Տէրեան այդ օրերուն, այսինքն 1908 Յուլիս 28-ին այնտեղի մասին կը ներկայցնէ իր տպաւորութիւնները, երբ Մոսկուայէն իր գիւղը կու գայ հանգստանալու համար եւ բնականաբար կ'իջեւանի իր հօր՝ շրջանի քահանային տունը:*

*Իշխանութիւնները չկարողանալով գիւղացիներուն մէջ գտնել ահաբեկման հեղինակները, զայրոյթով կ'առնեն ծայրայեղ որոշում մը, որ ռուսական բացատրութեամբ կը կոչուի էկզեկուցիա, այսինքն պատիժի ենթարկել: Եւ այդ պատիժը փրոֆ. Սուքիասեան Վահան Տէրեանի մասին գրելով կը յայտնէ, «որ չորս գիւղերի վրայ կը բանեցուի պատիժը: Ոստիկանութեան անգամ մը եւս անյաջող փորձէն ետք, այդ գիւղերը կ'ուղարկուին 200 քազաքներ, իւրաքանչիւրը երկու ձիերով, որպէս էկզեկուցիա տեղաւորւում են չորս գիւղերում, մեծ աւերածութեան մատնելով տեղացիների տնտեսութիւնը: Քազաքները այնքան առաջ կ'երթան որ բացի իրենց բարբարոսական արարքներէն կը պահանջեն կանայք:*

*Այս կացութենէն դուրս գալու համար Տէր Սուքիաս, Վահան Տէրեան եւ իր եղբայրը իրաւաբան Աշոտ Տէր Գրիգորեան կը մեկնին Ախալքալաք եւ ուժեղ ազդեցութեամբ միջամտութիւն կը կատարեն յաջողելով վերացնել այդ ահաւոր պատիժը հայկական գիւղերուն վրայէն:*

*1908 Օգոստոս 14ին, այս անգամ հարցը Թիֆլիսի նահանգապետին հասած ըլլալով՝ շնորհիւ Տէր Գրիգորեան ընտանիքին՝ Վոգինօ Վոզինքսքին կը ժամանէ Գանձա եւ Տէր հօր տան մէջ արժանանալով սիրալիր ընդունելութեան ներում կը շնորհէ բոլորին եւ շրջանը կը խաղաղեցնէ:*

*Ջաւախքի մէջ եղած հնչակեաններու այս յեղափոխական հսկողութիւնը, նաեւ իրենց տարածած սարսափով, տեսակ մը հանդարտութիւն բերած էր այդ շրջանին մէջ, ուր մնայուն կերպով գոյութիւն ունէին թուրք աւազակ խումբերու թալաններն ու սպանութիւնները: Գիւղացիները չունէին պատեհութիւնը վայելելու կառավարական հովանաւորութիւնը: Այդ օրերուն հայ գիւղացիներու բողոքին վրայ էր որ գաւառապետը նշանակած էր Ախալցխացի Ասլան Ասլանեանը որպէսզի իր խումբով պայքարի աւազակներու դէմ:*

*Այս պաշտպանութիւնը առաւելաբար անուանական եղած է դժբախտաբար:*

# ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՆՄԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*Աստուծոյ, այս ընծայուած ուրախ առիթին համար, ուր պիտի վայելենք մեր սեփական դպրոցի համալիրը:*

*Գոհունակութիւն եւ շնորհակալութիւն կը յայտնենք, բոլոր անոնց, որոնք աղօթեցին եւ ջանք թափեցին այս գործի յաջողութեան համար:*

*Բնականաբար այս քայլը հիմնական կալուածային ներդրում մըն է, ապագայի համար: Կալուածին գնման գինը 7 միլիոն տոլար է, որուն 5.5 միլիոն տոլարը փոխ առնուած է դրամատունէ եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութենէն, որպէսզի պէտք եղած գումարը ամբողջանայ:*

*Հոգաբարձութիւնը պիտի սկսի դրամահաւաքի աշխատանքներուն այժմու պարտքը կարենալ նուազեցնելու մտահոգութեամբ:*

*Հարաւային Քալիֆորնիան ամենէն կարեւոր գաղութն է սփիւռքի մէջ, ուր հայկական վարժարաններ զօրավիգ կը հանդիսանան հայ համայնքին: Դպրոցս կը խնդրէ ձեզմէ, որ նեցուկ կանգնիք մեր թանկագին Սահակ-Մեսրոպ Վարժարանին:*

*Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք հեռաձայնել՝ (626) 798-5020 թիւին:*

# «ՁԷՄԻՐԷ»Ն ԴՈՒՌԸ ԿԸ ԹԱԿԷ

*Շարունակուած էջ 7-էն*

*րութիւն կ'առնէ իր արարումէն աւելի քան դար մը ետք:*

*«Զէմիրէ»ի ներկայացումները պիտի տրուին միայն երեք անգամներ, Pasadena Civic Auditorium-ի մէջ, Մայիս 30, 31 եւ Յունիս 1, 2008ին:*

*Ներկայացման իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հռչակաւոր եւ տաղանդաշատ հայ արհեստավարժ արուեստագէտներ, ինչպէս նաեւ Արտաւազդ թատերախումբի եւ Լարք Երաժշտական Ընկերակցութեան անդամներ:*

*Զուխաճեանի երաժշտական ժառանգութեան վերարծարծումը եւ այս՝ փոշիներու տակ թաղուած գործին ծանօթացումով չ'աւարտիր ծրագրող կազմակերպիչներու նպատակը: Ներկայացման հասոյթով կը ծրագրուի տպագրութեան յանձնել Զուխաճեանի բոլոր գործերը, կորուստէ փրկելու եւ ազգային հարստութեան գանձարանին վերադարձնելու նպատակով: Այդպիսով նաեւ զանոնք տրամադրելի դարձնելու միջազգային արուեստի բեմերուն:*

*Կը հաւատանք թէ հայ հասարակութիւնը, զինուած նախորդ երգախաղերու բացառիկ փորձառութեամբ, իր նիւթական աջակցութեամբ եւ խուռներամ ներկայութեամբ ոչ միայն պիտի ապահովէ յաջողութիւնը այս անգամ եւս, այլ պիտի ապրի եւ ըմբոշխնէ սքանչելի ներկայացման մը անմոռանալի վայելքը:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ԾՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

**MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.**

**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Join Our New Music School in Pasadena
By Experineced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels
Professional Digital Recording studio
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**
**Phones: (626) 797-8867 & (818) 599-1606**
**and**
**334 N. Central Avenue Unit 202**
**Glendale, CA 91203**
**Phones: (818) 244-8244 & (818) 599-1606**
**Visit us at: www.musiclessons4u.com**

# ՀՈՒՄՈՐԻ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԶԳԱՑՄՈՒՆՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ

**ԿԱՌԼԷՆ ԵՓՐԵՄԵԱՆ**

*Ջեմ Ֆիտչը, Օրեգոնայից, շնորհաւորեց իր ընկերներին, գոյատեւելով... երկնքում: Նրա ընկերները Սուրբ Ծնունդի շնորհաւորական բացիկներ իրենից ստացան երկու ամիս անց... իրեն մահից յետոյ: Ջեմ Ֆիտչը, որի իւրայատուկ հումորի զգացմունքով, հիանում էին իրեն շրջապատում, մահացաւ Հոկտեմբերին 88 տարեկան հասակում: Մինչ մահի պահը նա յանձնարարեց իր «հաղորդակցուհի» Պեստի Դինին, որը 30 տարի եղել էր իր անձնական վարսաւիրը, ուղարկել այդ բացիկները Պեստի-ի խօսքերով Ֆիտչը երկար ժամանակ էր պրպտում հասունացել իր վերջին «գլոբալ» հանաքը եւ մէկ շաբաթ մահից առաջ, ասած որ ձգելու ժամանակ էլ ի մնացել եւ բացիկները պէտքէ ուղարկել մինչ տարեվերջը: Դեկտեմբեր ամսին Ֆիտչի ընկերները սկսեցին ստանալ այդ բացիկները, որոնք գրուած էին նրա ձեռագրով: Բոլոր 34 բացիկների վրայ յետադարձ հասցէն գրուած էր «Երկինք»: Ես հարցրեցի Մեծ երիտասարդին – կարո՞ղ եմ արդեօք կարճ ժամանակով վերադառնամ, որ ուղարկեմ այս բացիկները: Սկզբում նա ինձ մերժեց, բայց եւ շարունակում էի պնդել եւ վերջ ի վերջոյ նա ասաց – «Լաւ վերադարձի երկիր, դու այստեղ ինձ սկսել ես խանգարել»: Նշուած էր իր բոլոր ուղարկուած բացիկներում: «Ես կ՚ուզենային պատմել ձեզ, թէ ինչպէս են այստեղ ընդանում գործերը, բայց խօսք չեմ գտնում: Աւելի լաւ է ես վերադառնամ: Մեծ երիտասարդը ասաց, որ նա շատ մեծաչափ ընդառաջ գնաց թոյլատրելով իմ ժամանակաւոր վերադարձը եւ ես չեմ ուզում իմ բախտը փորձարկութեան ենթարկել այս պարագայում: Հնարաւոր է, որ մենք շուտով կը տեսնուենք (որոնց հետ աւելի վաղ, քան դուք մտածում էք): Ցանկանում եմ ձեզ երջանքանչել Սուրբ Ծնունդը»: Այսպիսի բացիկներ ստացան Ջեմ Ֆիտչերի ընկերները: Վերոյիշեալը շատերին համոզեց, որ նա իւրայատուկ եւ մինչեւ անգամ էկստրեմազ հումորի երկրպագու էր: Հումորը մեր կեանքի անբաժանելի եւ կարեւոր մասն է կազմում եւ երբեմն օգնում է յաղթահարել կեցութեան դժուարին պահերը: Հումորը լինում է կոպիտ, նուրբ, բազմագոյն եւ նրբերանգ: Ամէնուրեք գնահատւում է Անգլիական հումորը: Երբեմն հումորը ծագում է անսովոր պահին եւ ստանում պահին բնորոշ արտայայտութիւն: Վերջերս ես այցելեցի Քենեթիի գերեզմանը Առլինգտոնեան գերեզմանատանը Ուաշինկթոնում եւ բազմաթիւ այցելուների շարքում ինձ մօտ ծագեց «Ինքնամեծարման (մտքովս) ներքոյ յիշեալ տողերը*

*«Տապանաքարից զարմացած,*
*Կարող էի կարդալ այս տողը.*
*«Եթէ դու լինէիր պառկած,*
*Ես էի կարդացողը»:*

*Այս հրապարակումից յետոյ, մի գուցէ ընթերցողները յիշեն հումորի (մեծատառ) յիշատակման արժանի պահեր իրենց կեանքի եւ ցանկանան կիսուել այդ մասին «Մասիս»ի էջերում:*

# ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*նի գործիքային երկու ստեղծագործութիւնները («Շանթի կարմիր կօշիկները», «Յաղթանակ»), ըստ որում «Յաղթանակ» պարը ղեկավարեց մաեստրօ Հենրիկ Անասեանը:*

*Ինչպէս մեր յօդուածի սկզբում ասացինք, Հենրիկ Անասեանի յոբելինական երեկոն կազմակերպել էր Հայաստանի Մշակոյթի Նախարարութիւնը: Երեկոյին ընթերցուեց Մշակոյթի նախարար Տիկ. Յասմիկ Պօղոսեանի մեծապէս գնահատելի, ողջոյնի ջերմ խօսքը, որին յաջորդեց Հայաստանի երաժշտագէտների աւագագոյն ներկայացուցիչ, բանիմաց ու չափազանց գործունեայ Արաքսի Սարեանի հանգամանալից վերլուծութիւնը՝ Հենրիկ Անասեանի ստեղծագործութեան մասին:*

*Անասեանի գրական գործունէութիւնը դրուատեց ներհուն մտաւորական Դաւիթ Մուրատեանը եւ յոբելեարին յանձնեց Հայաստանի Գրողների Միութեան անդամութեան պատուոյ անդամատոմսը:*

*Հայաստանի ռադիոյի, ի մասնաւորի, նախագահ Արմէն Ամիրեանի ողջոյնի խօսքը փոխանցեց լաւագոյնս ճանաչուած հաղորդավար եւ ասմունքող Սարգիս Նաճարեանը, որ երիտասարդ տարիներին վարել է Անասեանի ղեկավարած համերգները ու լաւագոյն յիշողութիւններ է պահպանել այդ տարիներից:*

*Մաեստրօ Անասեանի մաքառումներին քաջածանօթ կոմպոզիտոր Վլադիլեն Բալեանը ասաց. - «Այսքան երկար տարիներ օտարութեան մէջ ապրելով, Հենրիկ Անասեանը մնացել է որպէս հայ երաժիշտ, հայ կոմպոզիտոր, աւելին՝ իսկական երեւանցի...»:*

*Նշանաւոր խմբավար Յովհաննէս Չէքիճեանը Անասեանին բնութագրեց որպէս ունակ, ձեռներէց խմբավարի, որ կարողանում է իր շուրջը համախմբել բազմաթիւ երաժիշտներ:*

*Բանաստեղծ Արամայիս Սահակեանը ընթերցեց Հենրիկ Անասեանի նուիրուած պարոդիան՝ Սայաթ Նովայի «Քամանչա» երգի թեմաներով:*

*Լոս Անճելոսից յայտնի մտաւորական Օշին Քէշիշեանը հիմնականում դրուատեց Անասեանի երեսնամեայ գործունէութիւնը սփիւռքի ողջ տարածքին:*

*Ամբողջ երեկոն խանդավառ մթնոլորտում անցկացրած Ազատ Գասպարեանը ընթերցեց Հենրիկ Անասեանի՝ վերջերս հրատարակուած «Վերջին հեքիաթը» գրքից մի քանի հումորներ:*

*Կոմպոզիտոր, դիրիժոր, գրող Հենրիկ Անասեանի յոբելինակիան երեկոն աւարտուեց Զարենցի անուան տուն-թանգարանում՝ հիւրասիրութեամբ: Այստեղ ելոյթ ունեցողների մէջ պէտք է առանձնացնել գրականագէտ Սուրէն Դանիէլեանի եւ Հայաստանի Ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի շնորհաւորական ելոյթները:*

*- Շնորհակալութիւն մաեստրօ Հենրիկ Անասեան, մեզ՝ արուեստագէտներիս այսպիսի հաճոյք պարգեւելու համար:*

# ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 8-էն*

*Վարդանի եւ ընկերներու օրինակով: Ան ըսաւ. «Երբ այսօր ամէն ժամանակներէ աւելի շրջապատուած ենք մեր լեզուին ու կրօնքին սպառնացող վտանգներով, հարկ է օրինակ առնել Վարդանանց քաջերէն, պահել մեր լեզուն ու կրօնքը անաղարտ...», ապա աշակերտութիւնը հաղորդուեցաւ, պատրաստուելով «Վարդանանց ճակատամարտ»ի ներկայացումին մասնակցելու:*

*Նոյն օրուան ժամը 10:30ին պաշտօնական հանդիսութիւնը սկսաւ օրուան խորհուրդը արտայայտող «Նորահրաշ» շարականի երգեցողութեամբ, ապա Հայաստանի եւ վարժարանիս զոյգ քայլերգները հնչեցին, եւ առիթին պատշաճ բացման խօսքով հանդէս եկաւ հայերէն լեզուի դասատու Մարօ Գույումճեան: Ան ներկայացուց հայոց պատմութեան կեանքէն ներս յատկանշական թուականներ, որոնց շարքին Վարդանանց պատերազմը, զայն բնորոշելով «Հաւատքի պատերազմ», շեշտեց մեծ զոհողութիւններու եւ մատղաշ կեանքերու գնով ձեռք ձգուած ու պահպանուած մեր հաւատքի ու մեր լեզուի յարատեւութեան անհրաժեշտութիւնը եւ, այսօրուան հետ բաղդատելով եզրակացուց. «Ներկայ համաշխարհայնացումի արագընթաց կեանքին մէջ, մեր գլխաւոր պարտականութիւնն է անսասան պահել մեր լեզուն, կրօնքը, հայրենիքը, մեր ժողովուրդը»: Հանդիսութեան տեւողութեան լրիւ աշակերտութիւնը հանդէս եկաւ Վարդանանց ճակատամարտի նուիրուած եւ դասականացած խմբային արտասանութիւններով եւ խմբերգներով, նոյնիսկ մանկապարտէզի աշակերտները յաղթանակի գիտակցութեան հպարտութեամբ՝ երգեցին նոյն հպարտութեամբ եւ քաջութեան վարակիչ զգացումով. օրուան դերակատարները բոլորն ալ արդարացուցին իրենց ուսուցիչներու աշխատանքը:*

*Վերջապէս սպասուած պահը հասաւ. ծնողներ, աշակերտներ, հիւրեր, բոլորը անհամբեր կը սպասէին ներկայացումին, ուր երրորդ դասարանի փոքրերը արհեստավարժ դերասաններու պէս բեմականացուցին Աւարայրի ճակատամարտի նախօրեակին Հայաստանի մէջ տիրող ընկերային, քաղաքական եւ տնտեսական վիճակը, ներկայացնելով ժողովուրդի բոլոր խաւերէն օրինակներ: Ապա տուին պատերազմի պատրաստութիւնը, ժողովուրդին դէպի պատերազմ երթալով իրաւունքը պաշտպանելու պատրաստակամութիւնը, նոյնիսկ «Տիկնայք փափկասունք»ի պատերազմին մասնակցելու պահանջքը, մարմնաւորուած Շուշանիկի տիպարով: Այսպիսով անոնք ներկայացուցին հայոց պատմութենէն պահ մը, 451 թուականը, անգամ մը եւս մեծ ճարտարութեամբ, մեզ բոլորս փոխադրեցին Տղմուտ գետի ափը, 1500 եւ աւելի տարիներ ետ, երբ Վարդանի մայրը նահատակներու յոյլին մէջ կը փնտռէր իր հերոս զաւակը, մինչ ժողովուրդի արդար զգացումները կ՚արտայայտուէր Մէրի Նաճարեանի ձայնով «Աւարայրի դաշտը» մեներգի հնչեղ նոթերու ընդմէջէն:*

*Հանդիսութիւնը հասած էր իր աւարտին: Տնօրէնուհի քոյր Լուսիա իր փակման խօսքով գոհունակութեամբ հաստատեց երրորդ դասարանի աշակերտներու ապրումով խաղարկութիւնը, «որոնք մեզ փոխադրեցին 1500 տարիներ առաջ... հարկ է օրինակ առնել Վարդանի եւ ընկերներու հայրենասիրութենէն եւ քաջութենէն»: Ապա խօսքը փակեց՝ շնորհակալութիւն յայտնելով հայերէնի ուսուցչուհիներուն եւ երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեանին, որոնց համբերատար աշխատանքին արդիւնքն էր այսօրուան գեղեցիկ հանդիսութիւնը:*

*Աշակերտութիւնը մեկնեցաւ սրահէն Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:*

# ՎԱՐԴԱՆԱՑԻ ԵՒ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ Ա. ԵՒ Մ. ՅՈՒԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

*Շարունակուած էջ 8-էն*

*ցին «Իմ Հայրենեաց Հոգի Վարդան» երգը, խանդավառութիւն ստեղծելով հանդիսատեսներուն մօտ:*

*Մանկապարտէզի աշակերտները երգեցին երեք երգեր, «Ձմեռը», «Բարեկենդան» եւ «Քաջ Վարդան»:*

*Ա. կարգի աշակերտները ներկայացուցին Բարեկենդանը, երգելով «Գացէ՛ք Տեսէ՛ք, Ձեզ Բարեկենդան» ժողովրդային երգը:*

*Բ. կարգի աշակերտները արտասանեցին «Հպարտ Հայորդի» արտասանութիւնը: Ապա, Գ. կարգի 12 աշակերտները, իրենց մտորումները ներկայացուցին մեզի, թէ ինչպէս իւրաքանչիւրը իրենց տարբեր արարքներով արժանի են մերօրեայ Վարդանները կոչուելու, անոնցմէ մէկը արտայայտուեցաւ ըսելով. «Ես կ՚ուխտեմ ամէն ամիս մէկ հատ հայերէն գիրք կարդալ, այս ամիս արդէն հատ մը կարդացի, ես Մեղեդի Վարդան Մանոյեանն եմ», իսկ երկրորդ մը ըսաւ. «Ես ամէն անգամ, որ օտար բարեկամներու կը հանդիպիմ, իրենց հայոց պատմութենէն կը պատմեմ, որպէսզի լաւ ճանչնան մեր ժողովուրդը, ես Լռի Վարդան Սէօլեմեզեանն եմ»:*

*Դ. կարգի աշակերտները ներկայացուցին Վարդանանց պատերազմի պատմութեան տուեալներն ու դէպքերուն յաջորդականութիւնը: Ապա, կարգը հասած էր Ե. կարգի աշակերտներուն, որոնք կարդացին իրենց գրած խորհուրդները, թէ ինչեր կ՚ընէին եթէ իրենք Վարդան Մամիկոնեանը ըլլային: Կ՚արժէ նշել Մելինէ Թոփճեանին մտածումները. «Եթէ ես Վարդան Մամիկոնեանը ըլլայի, Վարդանին նման ես ալ կը կռուէի կրօնքիս համար: Մենք քրիստոնեայ ենք, եւ միշտ ալ քրիստոնեայ պիտի մնանք ու բնաւ պիտի չփոխենք մեր կրօնքը: Վարդանին նման ես ալ կը կռուէի մինչեւ մահ, իմ հաւատքս պահելու համար: Վարդանին նման ես ալ հպարտ եմ հայ ու քրիստոնեայ ըլլալուս համար»:*

*Օրուան պատգամը փոխանցեց, հայերէն լեզուի ուսուցիչներէն Պրն. Արշէն Յարութիւնեանը, որ Վարդանանցի Պատերազմին մասին խօսեցաւ եւ անդրադարձաւ նաեւ Վահան Մամիկոնեանին եւ Նուարսակի Դաշնագրի կարեւորութեան վրայ:*

*Վարժարանս յարգեց Վարդանանց Պատերազմի յիշատակը Ուրբաթ, Փետրուար 1ին իր դռները փակ պահելով աշակերտութեան դիմաց:*

**Նկարները՝ Վաչէ Մանկրեան**

## ԱԶԳԸՆՏԻՐԸ ԱԶԳՈՎԻՆ ՎԵՐԸՆՏՐԵՆՔ, ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

արդարակորով՝ պետականութեան ամրակուռ սիւները վերականգնելու խոստումով։

Ան կու գար ժողովրդավարական ճամբով վերահաստատելու իրմէ դաւադրաբար բռնաբարուած իշխանութիւնը, կարենալ շարունակելու համար կիսատ թողած իր հայրենանուէր կառուցողական աշխատանքները։

Ան կու գար իբրեւ հայրենիքի, ազգային, մշակութային եւ բարոյական ժառանգութիւններուն պահպանումով մտահոգ ազնիւ հայ մարդ։

Կու գար իբրեւ իր երկրէն ներս ժողովրդավարական, սահմանադրական ու ապահովական հիմնական կառոյցներու վերահաստատման հետամուտ, անաչառ քաղաքացի։

Ան կու գար իբրեւ երկրի եկամտաբեր կենսաղբիւրները, հարստութիւնները կողոպուտի-թալանի ենթարկած, անօրէնօրէն յղփացած իշխանաւորներու հաշուեյարդարը տնօրինելու առաջադրութեամբ զինուած արդարադատ առաջնորդ։

Ան կու գար հայ մարդուն արժանավայել, ազատ, անվախ եւ ապահով կեանք մը ապահովելու հրամայականը իր տեսլական դարձուցած մարդասէր հովիւ իբրեւ։

Իբրեւ հայրենի իշխանութիւններու անցնող տասը տարիներուն արցախեան հիմնահարցի եւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին յարաբերութեան մարզերէն ներս բախտախնդիր, այլապէս յեղյեղուկ գործելաձեւերու սրբագրութեան ծրագրի տէր ուղղամիտ ու օրինակելի բարոյականի տէր դիւանագէտ։

Այսօրուան իրավիճակով, Լեւոն Տէր-Պետրոսեանի կողքին համախմբուած կը մնան աւելի քան 16 հայրենական քաղաքական կուսակցութիւններ։ Անոնք իրարու հետ համախորհուրդ կը գործեն ներկայիս, պիտի գործեն վաղը ու միշտ, նպատակ ունենալով վերականգնել «այն բոլոր արժէքները, որի համար պայքարում էինք 90-ական թուականներին», եւ որոնք «այսօր աղաւաղուած են եւ երկիրը գնում է սխալ ճանապարհով», պիտի յայտարարէր Պրն. Նախագահը «Ռիա-Նովոստի» Գործակալութեան հետ 12 Փետրուար 2008ին Մոսկուայի մէջ ունեցած հարցազրոյցի ընթացքին։

Որ այլեւս չգտնուի ոչ մէկ հայ, ինչպէս Շիրակի մարզային կառոյցի ղեկավար գնդապետ Աշոտ Զաքարեանը, որ ափսոսար... «Մի՞թէ սա էր այն երկիրը, որի մասին մտածում ու երազում էինք 88-ին»

Այս բոլորը կ'արտացոլացնեն մէկը միւսին գերազանցող իր նախընտրական հաւաքներուն մասնակցող բազմատասնեակ հազարներու հասնող ընտրազանգուածներու հոգեկան դառն վիճակը եւ ակնկալութիւնները։ Այս մէկտեղումները, միանշանակ, ճամբայ կը հարթեն դէպի Լ.Տ-Պետրոսեանի նախագահական ընտրութեան, որ կը թուի ըլլալ ստոյգ։

Պէտք չէ յուսախաբ ընել այդ զանգուածները, որոնք ոտքի են ելած յանուն արդիւնաւէտ ապագայի։ Յանուն արդար, արդարադատ, սահմանադրական, ապահով եւ կենսուրախ կեանքի։ Յանուն բարգաւաճ, ուժեղ, ժողովրդավար եւ արժանապատիւ հայրենիքի կառուցման։ Յանուն վստահելի, հայրենանուէր ու ազգասէր առաջնորդութեան...։

Մեր կոչն է մեր հայրենի բոլոր սրտցաւ, ընդդիմադիր, հայրենանուէր քաղաքական կազմակերպութիւններուն, հաւատքով, միաբունք ու վճռական՝ բոլորուիլ մեր անկախ հայրենիքի ազգընտիր հիմնադիր Նախագահ Լ.Տ-Պետրոսեանի շուրջ, կարենալ ապահովելու համար մօտաւոր վաղուան ժողովրդավար նուիրական խարիսխները։

Մեր կոչն է նոյնպէս մեր հայրենաբնակ բազմաչարչար ժողովուրդին, աներկիւղ, ինքնավստահ ու հաւատքով աոլցուն քուէարկել Լ.Տ-Պետրոսեանին, կարենալ առաջին իսկ հանգրուանով իշխանութենէն հեռացնելու համար Ռոպերթ Քոչարեան-Սերժ Սարգսեան տասնամեայ հեղձուցիչ համակարգը, որ ի բիւրս այլոց՝ հաստատուած է եղած խտրականութեան, բռնութեան, սպառնալիքի եւ անձնական ու հաւաքական սպանդի վրայ։

Ազգովին վերընտրենք Լ.Տ-Պետրոսեանը՝ մեր անկախ հայրենիքի ազգընտիր հիմնադիր Նախագահը եւ վերականգնենք մեր ազգային արժանապատուութիւնը։

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** -----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** -------------

**Tel :**------------------------ **Fax :** --------------------------

## ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆ ՈՂ ԵԽՍ Է

*Խոր ցաւով կը գուժենք մահը Կրթական մշակ, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀԲԸ Միութեան Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան Վարժարաններու երկարամեայ տնօրէն՝ Արա Թոփճեանի, որ պատահեցաւ Կիրակի, 10 Փետրուար, 2008, Պէյրութի մէջ։*

***ՀԲԸՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՈՒՀԻ-ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ***

***ՀԲԸՄ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՄԻՇՏ ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ

*Շարունակուած էջ 13-էն*

նենալու հայ ցեղասպանութեան նուիրուած թանգարանների, հրապարակային ցուցադրումների եւ հրապարակումների տպաւորչականութեան, համոզչականութեան, զգացմունքայնութեան վրայ, եթէ չլինէին գերմանական բանակի բժշկական ծառայութեան սպայ Արմին Վեգների գործերը: Նա ծառայում էր Պաղտատի երկաթգծի այն հատուածում, որտեղից անցնում էին հայերի մահուան ճանապարհները: Նա հնարաւորութիւն ունէր շփուելու հայերի հետ ինչպէս ճանապարհին, այնպէս էլ մահուան ճամբարներում: Նա հաւաքում էր ցեղասպանութիւնը հաստատող փաստաթղթեր ու անում հարիւրաւոր նկարներ՝ դրանք, այլ գինուորների հաւաքածի հետ, տարբեր խողովակներով, ուղարկում Գերմանիա ու ԱՄՆ: Նրա գրչին են պատկանում են նաեւ ականատեսի խիստ կարեւոր գրառումներ: Այդ նկարների զգալի մասի բնագրերը պահպանւում են Stutgart's Schiller Naturelmuseum Deutslands Literaturecchild թանգարանում: Նոյն ասպարէզում, բայց նուազ նշանակութեամբ, իր ներդրումն է ունեցել նաեւ Խարբերդի ԱՄՆ-ի հիւպատոս Լեսլի Դեվիսը, որը յաճախակի ականատես էր լինում հայերի մահուան կարաւանի երթին ու յօշոտուած ու սպաննուած հայ կանանց, ծերերի ու մանուկների դիակակոյտերի: Նրա կատարած նկարները երկար ժամանակ մնացել էն ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում: Ընթերցողը խորը երախտագիտութեամբ տեղեկանանում է այդ նուիրեալ հայասէրների ծառայութեան:

Մեծ Եղեռնի 50-րդ տարելիցից չորս տարի առաջ լեհ մտաւորական Բոհտան Կեմպարսկին «Քիերունկի» շաբաթաթերթում հրապարակեց «Նամակ իմ վաղեմի Թուրք ծանօթիս» գրութիւնը, որը ցնցեց մտաւորական աշխարհը: Հիմքեր կան ենթադրելու, որ այն հասցէագրուած է Թուրք համայնավար բանաստեղծ Նազիմ Հիքմէթին, որը ուրանում էր Թուրքերի կողմից ծրագրուած ու գործադրուած հայերի ցեղասպանութիւնը: Լեհ մարդասէրը գտնում է, որ հիթլերականները աշակերտներն են Թուրք ցեղասպանների եւ հաւատացած է, որ գալիք ժամանակաշրջանում բազմաչարչար ժողովուրդների եւ բռնագրաւուած երկրների ինքնաբեր ազատագրման գարնան մէջ Հայկական Հարցը անպայման պիտի ծառանայ: Նա գտնում է, որ ուրացումը մարդուն ենթակայ է դարձնում բարդոյթների, խղճի խարազանման ու պատմութեան դաժան վճռին:

Ուշագրաւ է մեծ մարդասէր Յովհաննէս Լեպսիուսի ներդրումը հայ ցեղասպանագիտութեան ինչպէս փաստագրութեան, այնպէս էլ տեսութեան մշակման ասպարէզում: Հայ ցեղասպանագիտութեան արդի տեսութեան մշակման ակունքները մենք յաճախ տեսնում ենք նրա գործերում: Հեղինակը նպատակայարմար է գտնում սոյն հատորում առաւելաբար կանգ առնել նրա փաստագրական տուեալների նշանակութեան վրայ:

Ընթերցողը ծանօթանում է նաեւ Թուրքերի կողմից հայերի գործադրած ցեղասպանութեան մասին Անտրէյ Մանտելշտամի, Հըրպըրդ Էդմընգ Կիպընզի, Հայնրիխ Ֆիրբիւխերի, Հէնրի Պարպի, Առնոլդ Ժոզէֆ Թոյնբիի, Անատոլ Ֆրանսի, Հերոյոսի Սեգավանի, Էդուարդ Ս. Լիտլիի, Հռոմի Պապ Պենետիկտոս ԺԷ-ի եւ այլոց տեսակէտներին: Նորին Սրբութիւնը գրում է. « Հայ ազգը ականատես է լինում իր բազում զաւակների մահուան, շատերի բանտարկութեան կամ աքսորին: Նրանց մէջ շատերը հոգեւոր անձինք են, նոյնիսկ եպիսկոպոսներ: Իսկ հիմա մենք ականջալուր ենք լինում, որ ամբողջ գիւղերի եւ քաղաքների բնակչութիւնը պարտադրաբար, խորը վշտով ու տառապանքով թողնելով իրենց տները՝ տեղահանւում են դէպի հեռաւոր համակենտրոնացման ճամբարներ, ուր հոգեկան տառապանքներից աւելի ենթարկւում են սովի արհաւիրքներին»:

Այսպիսով, ակնյայտ է դառնում, որ գոյութիւն ունի հայ ցեղասպանութեան մի ընդհանուր տեսութիւն, որ այն լոկ հայկական գաղափար չէ, որ հայկական ու համամարդկային պատկերացումները իրար յարիր են եւ ունեն խիստ էական ընդհանրութիւններ: Հետեւաբար, հակագիտական ու անհիմն են բոլոր այն փորձերը, որոնք գտնում են, որ գոյութիւն ունի հայ ցեղասպանութեան հայկական ու Թուրքական, կամ Թրքամէտ բացատրութիւններ, որոնց համոզչականութիւնը, հիմնաւորուածութիւնը պարզելու համար անհրաժեշտ է ստեղծել մի յանձնաժողով : Ճշմարիտ է այն, որ գոյութիւն ունի հայ ցեղասպանութեան ընդհանրական գիտական մի բացատրութիւն, որին հակադրւում է Թրքականը:

## ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Մարտ 1 | Comedy Night |
| Մարտ 23 | Զատկուայ Տօնակատարութիւն |
| Ապրիլ 5 | Spanish Night |
| Ապրիլ 26 | Las Vegas Trip |
| Մայիս 11 | Մայրերու Օրուայ նախաճաշ |
| Յունիս 14 | Հայրերու Օր |
| Օգոստոս 10 | Համգամակային ճաշկերոյթ »Մասիս« շաբաթաթերթի |
| Հոկտեմբեր 4 | Հ.Ս.Ս.ի Տարեկան Պարահանդէս |
| Դեկտեմբեր 31 | Նոր Տարուայ Խրախճանք |

International Academy of Los Angeles
Presents
An Evening Honoring Composer, Director &
Pioneer of Armenian Television

# SARKY MOURADIAN



Manuel
Kevin George
Chuko
Andre Danik
Narine Shahbazian
Salpi Mayelian
Hovik Krikorian
Harut Hakopian
Jenny Armen

Flora Martirosian
Adiss Harmandyan
Vatche
Hovik Grigorian
Levon Sevan
Maxim
Raffi Khardalian
Razmik Mansourian
Armen Aloyan

Hosts: Anahit Martirossian, Aramayis Gharibyan, Noune Serobian

Thursday, April 10, 2008, 7:30 p.m.
ALEX THEATER
216 North Brand Blvd., Glendale, California 91203

FOR TICKETS CALL: (818) 913-2299
(818) 265-0506

FOR INFORMATION CALL: (818) 243-5722